

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

613.88

9


ԲԺ. Ա. ԳԱԼԱԶՅԱՆ

# ՍԵՐԱԿԱՆ

ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

18964

A 1  
4605




ՊԵՏՐՈՎԱԾ

ՅԵՐԵՎԱՆ

ՈՒՍՍԱՆԿՐԱՍԲԱԴԻՆ

1933



## ԱՌԱՋԱԲԱՆ

Այս աշխատանքով յես մտադիր եմ շոշափել մի շատ բարդ խնդիր՝ սեռական դաստիարակության և սեռական լուսավորության խնդիրը դպրոցում, վոր կազմում ե ընդհանուր մանկավարժության հիմնաքարերից մեկը:

Այս խնդիրը մանկավարժական գրականության մեջ մինչև որս շոշափվել ե և գտել բազմակողմանի լուսարանություն տեսական կողմից: Գործնական տեսակետից այն վերջնական ձեավորում-ռեցեպտ չի ստացել, վորովհետև ծածկված ե յեղել կեղծ ամոթի ծանր ծածկոցով, վորի բարձրացնելու գործը ընտանիքը զցել ե դպրոցի վրա, դպրոցը՝ ընտանիքի, մինչև վոր փողոցն և ստանձել մատադ սերնդի սեռական լուսավորության պաշտոնը և տվել իր դառը պատուղները:

Ներկայումս յերեխայի սեռական դաստիարակության և սեռական լուսավորության խնդիրը կարեորագույն և հիմնադիր խնդիրներից մեկը պետք ե հաշվել թե մանկավարժների և թե ծնողների համար:

Նա բազմիցս ծառացել ե և ալժմ ել կանգնած և մեր տռաջ ու շտապ կարգով լուծման և սպասում:

Մենք պարտք ենք համարում մեր յերեխաներին գրագիտություն և արհեստ սովորեցնել, տալ նրանց անհրաժեշտ գիտելիքներ և փորձառություն՝ կյանքի

կովի դեմ զինված լինելու համար, իսկ սեկսուալ-սեռական հարցերում, վորո՞ք խոշոր դեր են կատարում յերեխայի կյանքում և նրա անհառականության ձևավորման խնդրում, բարձիթող ենք անում նրանց, թույլ տալով, վոր նրանք զոե՞իկ ու կոպիտ անհատներից քաղեն այդ տեղեկությունները: Ուստի, զարմանալի չե, յեթե յերեխաների սեռական գիտելիքները խորհրդավոր, արդելված և վավաշոտ բնույթ են կրում:

Այս հսկայական բացը գործնական մանկավարժության մեջ մինչև ո՞չս չի գտել իր՝ արժանի գնահատությունը և լուծումը:

Թանի-քանի գաղտնի կոնֆլիկտներ են առաջանում յերեխայի մեջ, յերբ նա առաջին անգամ լնդհարվում ե մանկան ծագման պրոբլեմի հետ:

Ինչպիսի անմիտ սեռական թերորիաներ ե ստեղծում յերեխայի պսիխիկան մինչև սեռական հասունության շրջանը, ինչպիսի տրավմատիկ մոմենտներ ե թագցնում սեռական «անմեղության» հավասար սեռական տգիտությունը, վորը հոգատարությամբ պահպանում են ծնողներն ու մանկավարժները:

Իսկ շատերը գիտակցելով անգամ, չեն իմանում ինչպես մոտենալ և ինչպես լուծել այդ դժվարին և բարդ խնդիրը, վորովհետև նրանց տեսակետով այն մեկնարանությունը, վոր սեռական բնույթ ե կրում, սրբադիտամ ե յերեխայի պսիխիկան: Իսկ յերբ ընդհարվում են յերեխայի հոմառ հարցասիրությանը, «վորտեղից», ինչպես ջայլամի նսան թագցնում են գլուխները և արագիլի կամ կաղաքի պատմությունն անում, կամ «կմեծանաս կիմանաս» պատասխանով բավականանում:


Բայց մենք, դաստիարակելով ժամանակակից  
սեռական լուսավորության հիմունքներով, քիչ զոհեր  
չելինք փրկի պոռակութ ան և վեներական հիվանդու-  
թլունների ճանդիրից. լիթի սեռական լուսավորության  
պես հղոր պրոֆիլակտիկ միջոցը գործադրիչն, այս  
սոսիալական ախտերի դեմ, և բազմաթիվ ներո-  
տիկներ կազմավեյին իրենց ծանր ապրումներից ու  
մատուված չելինք լինի փողոցին, անկիրթ ընկերերի և  
ցինիկ անպատճախանատու լուսավորիչների.

Այս բոլորը զիտակցելով, արդի մահկոբանությունը  
գալիս է այն եզրակացուրյան. վոր այն, ինչ վերաբեր ւմ  
է յերեխայի սեռական կանոնին, Երակոց բազցնելն ան-  
կարելի, անբույատելի յեկ կօրսաքեր ե, ուստի անհրա-  
ծես է տալ նրան իր ժամանակին հարկավար սեռական  
լուսավորություն յիկ դասիարակերպյուն.

Իսկ այս խնդիրը կանոնավոր հիմքերի վրա դնե-  
լու համար պետք է լավ ուսումնասիրել յերեխայի  
սեռական զգացումների բարդ բնույրը և նրանց գար-  
գացման բոլոր աստիճանները:

Բայց դրանից, մանկավարժն ինքը պետք է  
ունենա սարուր մտածելակերպ, լավ պատրաստակա-  
նութլուն և մսնկավարժական նույբ տակ:

Այս աշխատանքով յիս նպատակ դնելով տկտի-  
վացման խթան տալ սեռական դաստիարակության և  
սեռական լուսավորության խնդրին դպրոցում այդ  
խնդիրը պիտի շոշափեմ սխեմատիկ կերպով ու զիխա-  
վորապես ցուցադրեմ սեռական լուսավորության խընդ-  
րի գործնական մոտեցման մի որինակ. վոր կատարել  
եմ Յերեանի Հրդ աստ. դպրոցներից մեկի վերջին  
խմբակներում:



ՍԵՐԱԿԱՆ ԲՆԱՉԴԻ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ ՅԵՐԵՆԱՅԻ ՄԵԶ  
ԵԵՎ ՆՐԱ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնվելով յերկու ժամանակակից զիտությունների՝ Պավլովի ռեֆլեքսոլոգիալի և Ֆրուդի ուսմունքի վրա, մենք գիտենք, վոր ըստ ռեֆլեքսոլոգիալի, փոփոխվող միջավայրի հետ փշը փում են և հին ունակությունները, վոր անպայման ռեֆլեքսները, ճնշվելով պարմանական ռեֆլեքսներից, կտմաց կտմաց դադարում են հրամայողական լինելուց որգանիզմի միջավայրին հարմարվելու գործում, իսկ պարմանական ռեֆլեքսներն՝ տուաշանալով, նպաստում են անհատի միջավայրին աստիճանաբար հարմարվելուն:

Ըստ Ֆրուդի՝ մանուկը ծնվում ե պատրաստի և արթուն սեռական ընտաղդով։ Թեև բարդ սեռական տպրումները խորթ են այդ հասակին, բայց ծնվելու որից նա ունի հաճույք ստանալու հակում և այդ հաճույքը քաղում ե նա բազմագան զրգոխէ աղրարներից, վորոնց թվում և սեռական գրգիռներից։

Հենց այս, վոր. մանուկը հնարավորություն  
ո՞նի ուժեղ հաճույք պատճառող սեռական զրբ-  
գիռներ ունենալու, ասում ե մեզ, վոր Մոլի և  
Շտրացի հիշատակած ասեկսուալ կամ ներտրալ  
հասակ լերեխալի համար գոլություն չունի:

Մանկան մաշկի և լորձաթաղանթի վորոշ  
մասերը նրա գրգովող կամ երոգեն զոնաներն  
են: Միջավայրն ե այդ զոնաների գրգոիչը: Ալդ  
գրգիռները կրկնվելով, դառնում են պալմանա-  
կան ռեֆլեքսներ, սեռական ռեֆլեքսներ, կամ  
աւնակություններ, ինչպես՝ ծծելու, համբուլիցի,  
դեֆեկացիալի, ոնանիզմի և այլ ռեֆլեքսները, հե-  
տևաբար, սեռական դաստիարակության խնդրում  
պետք ե լերնել այս լերկու ֆակտորներից, և  
սեռական ունակությունների դաստիարակության  
համաց, վորպեսզի սեռական ապրումները վա-  
ղաժամ չլինեն՝ պետք ե ուսումնասիրել լերե-  
խալի որգանիզմը, նրա միջավայրը և հմտորեն  
դեկավարել նրա սեռական կլանքի ձևավորումն  
ըստ նոր դաստիարակչական նպատակների, վոր  
թելադրում ե սոցիալիստական հասարակակարգը:

Սեռական ֆունկցիան հանկարծակի չի լե-  
րեան գալիս լերեխալի մեջ: Նա իր սկզբնական  
ելեմենտներով ծնվում ե լերեխալի որգանիզմի  
հետ և որգանիզմի եվոլուցիալի հետ միասին

զարդանում են ապագա սեռական ֆունկցիալի  
տարրական ելեմենտները:

Սեռական ապարատը, սեռ. ֆ և ցիտի  
նման լիրկար ժամանակ աճելով, վերջապես  
հասնում ե անտումի ական որդանների կատարե-  
լապես զարգացած մի ամրողջ սիստեմի, վորի  
պրոցեսներն որդանիզմի մեջ անջատ չեն ընթա-  
նում, այլ կապված են նրա բիոլոգիական բոլոր  
ֆունկցիաների հետ: Ռւստի, որդանիզմի ներքին  
բոլոր գործողությունները և նույնիսկ դեղորդա-  
նիզմացիաները հաղորդվում են և սեռական ֆունկ-  
ցիալին:

Արտաքին միջավալրը բեկվելով որդանիզմի  
մեջ, անդրադառնում ե գրգորիչ ու կարգավորիչ  
և հանդիսանում սեռական կյանքի համար: Իսկ  
վորովհետեւ արտաքին միջավալրը սեռական մի-  
ջավալր ե, ուստի սոցիալական ելեմենտները  
գրգիռները նյարդալին սիստեմի միջոցով հա-  
ղորդելով սեռական ապարատին. վրոշիչ են  
հանդիսանում սեռական ֆունկցիալի և սեռական  
կյանքի համար:

Այսպիսով, չկա անջատ սեռական ապարատ  
և ֆունկցիա, չպիտի գոյություն ունենա և ան-  
ջատ սեռական կյանք, անջատ սեռական դաս-  
տիաբակություն, տռանց ընդհանուր սոցիալական  
և բիոլոգիական բազալի:

Յեթե սեռականն ընտագդը մյուս ընտագդների  
նման ընտածին ե, այն պետք ե տուած բերի սե-  
ռական հակում և սեռական բավարարման ձրդ-  
տում:

Տեսնենք, թե լերը և ինչ ձեռվ ե սկսվում  
արաւաւայտվել սեռական հակումը լերեխալի մեջ,  
ինչ ձեռվ ե անդրադառնում նրա ընտագության  
վրա, կամ ալսպես ասած՝ լերը ե այն լերեխալի  
մեջ սեռական վարչի փոխվում:

Այն միտքը, թե սեռական հակումն արթ-  
նանում ե մարդու մեջ սեռական գործարանների  
հասունության հետ և ամեն մի վաղաժամ արթ-  
նացած սեռական վարք աննորմալ ե և հետեւանք  
լերեխալի որգանիզմի ալս կամ այն հիվանդու-  
թյան, ներկայումս ըիոլոգիապես չի արդարա-  
նում:

Հայտնի լե, վոր սեռական հակումը շատ  
բարդ լերեռությ ե, վորն առաջ ե դալիս մասամբ  
սեռորգաններում, մտսամբ ել նրանցից դուրս,  
որգունիզմի ալլ մասերում և շոշափում ե անգամ  
մարդու պսիխիկան:

Սեռական հակումը կարող ե տուած գալ և  
ուժեղանալ մարմի մակերեսի զանազան մասե-  
րի զրգուամից՝ համբուլըրից, շփելուց, շոլելուց և  
ալլն...

Մարմի մակերեսի (մաշկի, լորձաթաղանթի)

գրգռումից հաճույքը մանուկի մեջ լերեան ե  
զալիս նրա կլանքի հենց տուաջին որից՝ խու-  
տուտ ածելը, շփելը բավականություն են պատ-  
ճառում մանուկին։ Նույնը նկատվում ե ծծելու,  
դեֆեկացիայի, միղելու և այլ պրոցեսների ժա-  
մանակ։ Նկատվում ե, վոր մանուկը լերեմն  
վոտքերն իրար քսելով, աշխատում ե վեր ար-  
տաղըն այդ գրգիռները, հաճույք ստանալու  
նպատակով։

Թեև այս հաճույքի զդացումը, վոր տուաջ ե  
զալիս մաշկի և լորձաթաղանթի զրդումից մա-  
նուկի մեջ, ամրողջովին սեռական չի կարելի  
անվանել, վորովհետև նա սեռական գործարան-  
ների հետ չի կապված (սեռ. գործարանները  
գեռ չեն զարգացած), ստական մեծ նշանակու-  
թյուն ունեն կանոնավոր դաստիարակության  
համար։ Յեթե սխալ գաստիարակության պատ-  
ճառով մանուկի մեջ ամրանան այդ սեփական  
մարմնից զրգիռներ ստանալու ձգտումները,  
նրանք կարող են աղբյուր հանդիսանալ վաղա-  
ժամ սեռական զրգիռների արթնացման և կդառ-  
նան մշտական ցանկություն՝ վերարտադրելու  
այդ զրգիռները, վորի ժամանակ լերեխան կա-  
րող ե շուտ գործադրել սեռական գործարաննե-  
րը, վորպես նման հաճույքների անմիջական  
աղբյուր։ Այս սովորություններն առաջ են բե-

բում վաղաժամ ոնանիզմ։ Բայց այս հաստկի  
ոնանիզմը տարբերվում է մեծերի ոնանիզմից  
նրան. Վ, վոր հանդիսանում եւ պատահական և  
պ' ըիֆերիկ գրգիռներ։

Այս բ լորը սեանկան սեռական կլանքի առա-  
ջին շրջանն ե՛ ըստ Գևորգ Երիսի կլասիֆիկա-  
ցիալի—առուտ-երաժիկ շրջան կամ պերիֆերիկ  
սեռական զգացումների շրջան, վորը կարիք չի  
գդում տրտաքին որևեկտի։

Սեռական կլանքի սերկրորդ շրջանը կլինի-  
ախ շրջանը, յերբ սեռական բնտղոր և նրա հետ  
կապված ապրումներն ու վարքագիծը կապվում  
են արդեն սեռական որդաններից բղիսած գրգիռ-  
ների հետ, սակայն սեռական մերձհցման մտա-  
պատկերները դեռ բացակտյում են յերեխալի  
յերեակալութլունից։ Այս ձեփի զգացումներն արթ-  
նանում են անմիջականորեն սեռական որդաննե-  
րում։ Սկզբում անորոշ, չղիտակցված, վոր կապ  
ունեն սեռական դրուժարանների հետ, վորպես  
ընդհանուր Փիզիկական զգացումներ, անորոշ  
ցանկություններով նրանք շուտով զիտակցվում  
են և յերեխան հասկանում եւ նրանց կապը սե-  
ռական որդանների հետ։ Այս մոմենտից առաջ ե  
գտլիս սպեցիֆիկ հետաքրքրուն դեպի սե-  
ռական որդանները և դեպի այն բոլորն, ինչ  
կապված ե սեռ-որդանների հետ։

Նման վաղաժամ սեռական հետաքրքրության  
մեջ հաճախ հանցավոր են իրենք ծնողները,  
լերբ նրանք ժամանակից շուտ են դաստիարա-  
կու. և լերեխտի մեջ ամոթի զգացումը դեպի  
սեռական որդանները, մարմնի մերկությունը և  
ընական պահանջների պրոցեսները:

Սեռական կյանքի այս լերկրորդ շրջանը  
հանդիսանում է գիտակցված սեռական զգացում-  
ների առաջին. շրջանը, վրոպինետև նա լերեան ե-  
պալիս ագելի հաստկավոր, քան նախկին շրջանի  
լերեխտների, մոտավորապես նախադպրոցական  
(3—6 տ.) հաստկի լերեխտաների մեջ:

Սեռական կյանքի լերբորդ շրջանն այն շրր-  
ջանն է, լերբ սեռական ապրումներին և սեռա-  
կան որդաններից բղիպած զրկիոներին ու զգա-  
ցումներին միանում են սեռական մերձեցման  
մտապատկելները: Այս շրջանը կոնկրետ ֆան-  
տազիաների, լերտղների, բարեկամության, սի-  
րահարության, սեռական մերձեցման և այլ շրր-  
ջանն է, կամ, արապես ասած՝ ՀԵՏԵՐՈԵՐՈՑԻԿ  
ՇՐՋԱՆ:

Այս լերեք շրջանների լերեան գույը և տե-  
վողությունը զանազան լերեխտաների համար  
տարբեր են: Այսուհեղ խոչընը դեր են խաղում ժա-  
ռանգականությունը, դաստիարակության պայ-  
մանները և մանավանդ՝ սոցիալական միջավայրը:

**ՍԵՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴՐԻ-  
ՆԵՐԸ**

Սեռական դաստիարակության հիմնական  
խնդիրներն այն են, վոր մենք չճնշելով լերե-  
խալի մեջ սեռական բնազդի զարգացումը,  
ստեղծենք այնպիսի պայմաններ, վորտեղ նրա  
ՍԵՐԱԿԱՆ ՎԱՐՄԻՔԻ ԶԵՎԱՎԱՐՈՒԽՆ ԱՌՈՂՋ  
ԸՆԹԱՆԱ և հետ կասեցնի վաղաժամ սեռական  
կլանքից, վաղաժամ նեռակտն պահանջի արթ-  
նանալուց և բավարարելուց՝ թե նորմալ ձևով և  
թե ոնանիզմով կամ այլակերպման ուրիշ ձե-  
վերով։

Առողջ սեռական վարք համարվում է այն  
վարքը, լերբ սեռական բնազդի և սեռական զգա-  
ցումների զարգացումն անջատ , են ընթանում  
Փիզիկական և հոգեկան զարգացումից, գերիշ-  
խող շեն նրա բնդիհանուր վարքի վրա, իրենց  
վրա չեն կենտրոնացնում լերեխալի ուշադրու-  
թյունը։

Սեռական առողջ վարքի ճանապարհներն են։

Առաջինը՝ վերացնել լերեխալի շրջապատից  
այն բոլորն, ինչ նպաստում է սեռական զգա-  
ցումների զրգուման և ուշադրության կենտրոնաց-  
ման սեռ-որգանների վրա։

Եթերորդ՝ ստեղծել լերեխալի կյանքի և  
աշխատանքի համար այնպիսի պայմաններ, վո-

ըսնք հնարավորություն կտան նրա սեռական զգացումները և կուտակված սեռական ձգացումները ՍՈՒԲԼԻՄԱՑԻԱՑԻ ինթարկել, կամ կերպարանափոխել ուրիշ ձևի ձգտումների՝ խաղի, զվարճության, ստեղծագործական, հետախուզական և հաստրակական ակտիվ աշխատանքի և այլ ձգտումների:

Ուրիշ խոսքով՝ սեռական դաստիարակության խնդիրն ունի լերկու մոմենտ.

1. Վահականել սեռական բնազդը՝ վորպես կլանքի աղբլուր,

2. Սեռական բնազդը հալատակեցնել կուտուրալին, ինքնադիսցիպիլինտլին, ինքնանալիզին, ալիխնքն՝ հետաձգել լերեխաների և պատանիների սեռական կլանքի սկիզբը և պահականել նրանց մինչև բիոլոգիական և սոցիալական կտարարականությունը: Ժուժկալությունը դարձնել վոչ ստիպողական, այլ ինքնաբուղխա, ասում են Ռուբինշտեյնը:

Սեռական դաստիարակության միջոցներն են.

1. Անմիջական ներգործություն լերեխալի վրա կամ ֆիզիոդաստիարակություն որգանիզմի դիմադրողական ուժերը՝ բարձրացնելու համար:

2. Սեռական լուսավորություն կամ բացարձություն ու նախազգուշացում:

3. Միջազգային ընտանիքի և դպրոցի միջոցով կատարած աղդեցություն:

Վաղաժամ սեռական զգացումների դեմ պարքարելու միջոցներ են՝

1. Կուլտուրական պայմաններ ընտանիքում:

2. Սուբլիմացիալի կազմակերպում (հասարակական աշխատանք, Փիզիուլտուրա և այլն):

ՍԵՐԱԿԱՆ ԲԱԱԶԴԻ ՅԵՐԵՎԱՆ ԳԱԱԾ, ՆՐԱ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԻ

Նախադպրոցականի սեռական բնադրի և հակումների վաղաժամ արթնանալուն նպաստում են զանազան պատճառներ:


Սեռական գրդիոներ են տուաջ բերում մանկան գիգիենայի թերությունները, վորոնց թվին են պատկանում հետեւալ հանրածանոթ մոմենտները՝ անկանոն սնունդը (սպիտակուցալին նյութերի առատությունը, առատ խմիչք քնելուց առաջ...), հագուստի պակասությունները (նեղ, հարող հագուստ), Անկողնի պակասությունները (տաք, փափուկ անկողին, ընդհանուր անկողին), Փորի վրա պառկելը, ձեռքերը վերմակի տակ պահելը, արթնանալուց տեղերում լերկար մնալը և այլն: Մանկան ռեժիմի պակասություն-

ները՝ ձանձրութիւն, պարապություն, Փանտազիա,  
չափից դուրս քնքություն ձնողների կողմից,  
հաճախակի համրուլը, պարզեներ, վախեցնւէ,  
սարսափելի պատմություններ, հերիաթներ, կոպ-  
տություն, ցինիդմ և անգմություն, որինակ՝ լե-  
բեխալի ներկայությամբ մարդու կամ կենդանի-  
ներին ծեծելը, կենդանիներ մորթելը և այլն.

Մեծ դեր ե խաղում ձնողների սեռական  
վարքը լերեխալի մատ, վորն անդրադառնում և  
նույնիսկ լերեխալի խաղերի վրա (հալրիկ, մալ-  
ըրիկ խաղալը), լերեխալին լերկար ծիծ տալը և  
վորոշ հիվանդություններ՝ որինակ վորդեր, տակը  
միզել և ալին...

Վաղաժամ արթնացած սեռական հակումնե-  
րը նախադպրոցական հասակում արտահայտվում  
են նրա վարքի մեջ զանազան ձեռվ անվերջ վա-  
ղաժանքներ, զրկախտոնության, համբկուրի, սե-  
ռական հետաքրքրության, ընական պահանջերը  
ծածկելու, սադիստական հակումների (ծեծի)  
կամ, վերջապես, առւտոերուստիզմի կողիտ ձեերով  
վաղաժամ ոնանիզմի, վորը հետևանք և պատահա-  
կան ձեռվ տուաջ լեկած սեռական գրգռի, որի-  
նակ, փայտ հեծնելուց, սեռական որգանները  
լվանալուց, շփելուց կամ ուրիշին ընդուրինակե-  
լուց, ուրիշից սովորելուց:

Վաղաժամ արթնացած սեռական հակումնե-



ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅՈՒԹ  
ԳՐԱԴԱՐԱՆ - № 2



ըըն արտահայտվում են և նախադպրոցականի  
խաղերի մեջ, ուստի խաղերը պահանջում են  
խելացի և հմուտ զեկություն և կոնտրոր:

Յեթե հեռացնենք այն բոլոր մոմենտները,  
վորոնք վաղաժամ սեռական հակումներ են արթ-  
նացնում յերեխալի մեջ, յեթե մի փոքր բացառ-  
ընք յերեխալին նրա սովորությունների մեռ-  
սակարությունը, յեթե ձեռք առնենք մի շարք  
արգելիչ միջոցներ՝ նախազգուշացում, արգելք և  
ուշի ուշով հսկողություն պահպաննք, իբեր յե-  
րեխալի ուշադրությունը ցրենք իրենից, յեթե  
յերեխալի մեջ զարգացնենք պարզ վերաբեր-  
մունք դեպի ուրիշի մերկությունը և յեթե ամ-  
րացնենք յերեխալին ֆիզիկապես՝ ոնանիստա-  
կան հակումները և ընդհանրապես սեռական հա-  
կումները կարելի յե վերացնել նախադպրոցականի  
միջից:

Այսպիսով, նախադպրոցական հասակում  
ամենակարեվորը սեռական դաստիարակու-  
թյունն ե. վոր տանում ե դպրոցն ընտանիքի  
նետ ձեռք ձեռքի տված:

Ինչ վերաբերում ե նախադպրոցականի սե-  
ռական լուսավորության, այն պետք ե լինի  
կարճ ու կտրուկ բացատրությունների հարցերին  
պատասխանելու ձեռվ, և ոնանիզմի դեմ պար-  
քարելիս ինչպիսի անցանկալի և սուր հարց ել

վոր տա նտխաղպրոցտկանը, անպատճախան չպի-  
տի թուկնվի, ալ կտրճ, պարզ և հանգիստ պա-  
տճախան պիտի ստանա, վորի ժամանակ պետք  
ե ոգտագործվի յերեխալի գիտելիքների պաշարը:

Հարցից խուսափելը, խաբելը կորստաբեր ե  
յերեխալի համար: Ալդ վերաբերմունքը խղում ե  
հավատը դեպի ծնողներն ու դաստիարակը և  
ավելի լե սրում սեռական հետաքրքությունը:

Պատճախանելիս պետք ե խուսափել տեր-  
միններից և մանբամասնություններից:

Այս համառոտ այն պրոֆիլակտիկ ճանա-  
պարհը, վորով կարելի լե նտխաղպրոցտկանի մեջ  
բարոյական իմունիտետ զարգացնել:

Վոր իրոք նտխաղպրոցականն ընդունակ ե  
կոնկրետ հարցեր տալու իր և շրջապատի ծագ-  
ման մասին, վոր այդ հարցերից խուսափելը  
կորստաբեր ե՝ ապացուցվում ե, բացի ներքե-  
քերած զրականության որինակներից, մեր կլան-  
քից մի որինակ ևս՝ փոքրիկ Սեղիկի մոր նամա-  
կը, վոր բերում եմ ալստեղ ամբողջությամբ:

«Սեղիկը հավեր շատ եղ սիրում և ամբողջ  
ամառը զբաղվում եր նրանցով: Տեսել եր հավին  
ձու ածելիս, թուխս նստած և թխսկանին ճու-  
տիկներով, վորոնց ծաղման ամբողջ պրոցեսը  
նրա համար վորոշ չափով հասկանալի լեր: Թվում  
եր, թե այդ բոլորը նրա ուշաղը ությունը չեր

գրավում։ Ճուտիկներին նա շատ եր սիրում։  
Խաղում եր նրանց հետ, կերակրում նրանց և  
նկարում։ Զուեռը, լերը Սեղիկը և այլ 2 ամսա-  
կան եր, հանկարծ իր տոտիկին հարց ե տվել՝  
«Բարու, շունի բալիկները վորտեղից են»։ Տա-  
տիկը պատասխանել եր, վոր շունը նրանց հա-  
նում ե ջրից։ Այդ բոպելին Սեղիկը տատիկին  
վոչինչ չեր պատասխանել, բայց հենց վոր լեռ  
վերադարձա տուն, նրա առաջին հարցը լեզավ՝  
«մամա, շունն իր բալիկներին վմրտեղիցի ե վերց-  
նում»։ Յես պատասխանեցի, վոր ինչպես ճու-  
տիկները հավի փորից են, այնպես ել շան լա-  
կոտներն են իրենց մոր իորից, միայն այն տար-  
բերությամբ, վոր հավը առաջ ձու լե ածում և  
հետո թուխս նստելով, ճուտ հանում, իսկ շունը  
կենդանի ճուտիկներ ե բերում։

Սեղիկն ուշաղը թլամբ լսեց, իսկ լերը  
վերջացրի, շատ ուրախացավ ու բարձր աղաղա-  
կով վազեց խոհանոց տատիկի մոտ «Բարու, բա-  
րու, դու խարլիկ բարու լես»։ Տես, մաման ինձ  
ճիշտն ասեց. շունը իր բալիկներին վորից ե  
բերում»։

Այդ դեպքից հետո անցավ 2—3 ամիս Ճա-  
շում ելինք։ Զուեկ ելինք ուտում։ Սեղիկը մուալլ  
նստած եր սեղանի մոտ։ Հանկարծ արտասանեց  
«Ճուկն ափառս շեր, ինչթև լեք սպանել, լեռ ձուկ

յեմ ուտի՞ւ ու կարծես ինքն իրեն շարունակեալով ասաց «Ճաւկը ձռւկ ե շինում, սեղանը սեղան, հացը՝ հաց, շունիկն ել՝ շուն, մաման ել մամա» ու դասնալրկվ ինձ հարցրեց, «մամա, զուինձ ածել Եսօ։ Հարցն անսպասելի յեր, մի փոքր շփոթեցրեց ինձ, բայց յես չկորցնելով ինձ, հանգիստ պատասխանեցի, վոր սեղանը սեղան չի շինում, ալլ նրան պատրաստում ե ատաղծագործը, իսկ հացը թիսում ե հացթուխը։

Սեղիկը բավականանալով, թողեց իր վեգետարյական հակումները և սկսեց ախորժակով ձռւկ ուտեր Մի քանի ժամանակից ալցելելով Մեքւնական փուռը և Աստաղձաղործորանը, ականատես յեղավ հացի և սեղանի պատրաստելուն։

Սակայն նույն մտքերը նորից վերտարձան Մեղիկի մոտ Մոտավորապես մոկ ամիս դրանից հետո, Սեղիկը հարցրեց ինձ՝ «մամա, զու ինձ վնդտեղից ես վերցրելու։

Յես նրան մատշելի ձեռվ բացատրեցի, թե վորտեղից ե նա, նախորոք հիշեցնելով նրան ճուտիկներն և լակոտները, բայց մնացի զարմացած, վորովհետեւ Սեղիկն ինձ չհավատաց։

«Մամա, խաբել չի կարելի, զու ինձ գտել ես սև արկղում՝ հեռու, հեռու տեղից»։

Յես հասկացա, վոր նույն հարցի մտսին

Սեղիկը խոսել ե ուրիշների հետ, վորոնք նման  
ձևով են բացատրել իր ծագումը:

Անցավ կրկին 2—3 ամիս, լեռը հայրը տուն  
վերադարձավ: Սեղիկի տուաջին հարցն եր՝ «Պա-  
պա, ի՞ս վհրտեղից եմ, դուք ինձ վհրտեղից  
վերցրիք»:

Հայրը փոքրողի, ինձ մոտ ուղարկեց պա-  
տասխանի, բայց Սեղիկը բացականչեց՝ «Պապա,  
ի՞ս չեմ ուզում փորից լինել, մաման տառում ե,  
վոր ի՞ս փորիցն եմ լեղել: Այնտեղ կեղտոտ ե,  
ի՞ս ուզում եմ վոր ինձ ծաղիկների միջից զըտ-  
նեք»:

Մոտավորապես այդ ժամանակ նկատեցի,  
վոր Սեղիկն իր բնական պահանջների ժամանակ  
սկսել ե առանձնանալ, քայլել ուրիշներից և  
դեպքեր են լեղել, վոր նա իրեն պահել ե, լեռը  
հարմարորթլուններ չեն լեղել:

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍԵՐԱԿԱՆ  
ԲՆԱՉԴՆԸ, ՆՐԱ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ  
ԼՈՒՍԱՎԱՐՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի աստ. դպրոցական հաստկի լեռեխաների  
մեջ սեռական հակումները սուր ընուլիթ են ստա-  
նում դարձլալ շնորհիվ մի շարք մոմենտների  
և ամենից տուաջ մի շարք անզդուշությունների  
ընտանեկան կենցաղում, որինակ՝ ընդհանուր

անկողին, մալրերի, քուլըերի անզգուշ շորափու-  
խություն, ընտանիքում ազատ ցինիկ խոսակ-  
ցություն, հայուանքներ, երոտիկ անեկդոտներ,  
վորն անկասկած լերեխան հասկանում եւ և  
տպավորվում:

Սուր բնուլիթ եւ տալիս ծնողների և լիրե-  
խաների միջի բարեկամական կապի խղվելը և  
փոխադարձ վստահության բացակալությունը  
Մեծ չօփով նպաստում եւ լերեխալին վոգելից  
խմիչքներ տալը, Վերջինիս փոքրիկ քանակու-  
թյունն անդամ սեռական դրգիռներ առաջացնող  
հատկությունը հայտնի լեւ դեռ հին դարերից,  
վորն ապացուցվում եւ հին լատինական առածով՝  
«առանց Վակլիսի, Վեներան սառն ե»:

Այս ուղղությամբ վիճակաղըեւթյունը ցուց  
ե տալիս, վոր վոգելից խմիչքներ խմում ե դրպ-  
րոցականների  $86\%$ , հարըում ե  $30\%$ , ծնողներն  
են խմացնում  $20\%$ :

Լ աստ. դպրոցականի սեռական հակումների  
սրմանը նպաստում են մի քանի հակադիգիենիկ  
սովորություններ, որինակ գոտկատեղը կապե-  
րով պինդ սեղմելը, լերկար հեծնելը (ձի, հեծա-  
նիվ), շարժումների, խաղերի և ֆիզվարժություն-  
ների պակասությունն ու աննորմալ դտստիարա-  
կություն ստացած փոքրիկ երոտիկների կատա-

ըտծ պրոպագանդը տրամքնոցներում ու մութ  
անկլուններում:

«Սրանից չորս տարի առաջ, մերը յես ապ-  
րում ելի իմ ծննդավարում չղիսելի, թե ինչ ե-  
ռնանիզմը Բալց լերը լեկա քաղաք ե գնացի իմ  
ընկեր աշակերտների հետ զբոսանքի, անտեղ  
սովորեցի», ասում ե Զ-րդ աստ. դպրոցականնե-  
րից մեկն իր՝ բժշկի տված անկետալում:

Այս հասակում արթնացտծ սեռական դըր-  
գիռները կտրող են յերեան գալ վաղաժամ սի-  
րահարության ձեռփ, կամ կանանց մերկությու-  
նից գրգռվելով և ալլն:

Փոքրահասակ դպրոցականների սեկուալ  
գրգիռները հաճախ փոխվում են առւտուերոտի-  
կից համոսեկսուալ հակումների, ալսինքն՝ դեպի  
նոր ոքեկտը, դեպի նման սեռը տածած հակում-  
ների։ Այս հասակից են սկսում տղաները հեակ-  
ել աղջիկներին և աղջիկները՝ տղաներին և այս  
հասակից են սկսում դրանց մեջ, առաջին հա-  
յացրից անհասկանալի թվող, թշնամական տրա-  
մադրությունները։

Նկատվում են յերբեմն արուամոլությունն  
անապատան և անխնամ յերեխաների մեջ և  
ինտերնատներում, իսկ ոնանիզմն այդ հասակում  
հասնում ե ամենամեծ չափերի։

Ոնանիզմն այս հասակում, վորպես արդեն

ամրացած տննորմալ սեկսուալ սովորություն  
կամ ռեֆլեքս, հաճախ կրկնվելով, հյուծվում է  
լերեխալի որդանիզմը, դրկելով նրան սեռական  
գեղաերի ակտիվացնող հորմոններց, նրան հոգ-  
նեցնելու և դեզորգանիզացիալի լենթարկելու  
պատճառով, փոխում և և լերեխալի վարբը,  
դարձնելով նրան թուլակամ տպատիկ, թառա-  
մած, տաշչկոտ, հակառակ սեռից փախչող, թու-  
լցած առաջադիմական ընդունակություններով  
անհատ:

Վորովինետև արբունքի շրջանն իր սկզբնա-  
կան շրջանում ճնշում է զործ դնում նյարդալին  
համակարգության գործունելության վրա և դրա-  
նով զցում լերեխալի ընդունակությունը, ուստի  
I աստ. դպրոցների վերջին խմբակներն ավելի  
շատ են տալիս լերկրորդ տարի մնացողներ, իսկ  
առաջադիմության անկումն արդ խմբակներում  
ավելի սուր և լերեան գալիս ոնանիզմով պա-  
րապողների մեջ։ Այս շրջանը մեծ ուշադրության  
պիտի տոնվի մանկավարժների կողմից։

## I ԱՍՏ. ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍԵՌԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ- ԹՅՈՒՆԸ

I աստ. դպրոցականի սեռական դաստիարա-  
կությունը պիտի տարվի նախ և առաջ ընտա-  
նիքի վրա ազդելով և ծնողների մեջ լուսավո-

բութիան աշխատանքներով, լեռկրորդ՝ լեռեխա-  
ներին խաղերով, մարզանքով, մատչելի սպորտով  
գրավելով ու խիստ, բայց աննշմարելի հսկողու-  
թիուն ունենալով նրանց վրա, վոր մութ ան-  
կյուններն ու արտաքնոցները ցուցարան չինեն  
խուլիգանական գրությունների լարան ջծառա-  
լեն ալլասեռված անհատների համար և միննուն  
ժամանակ չհանդիսանան ոնանիզմի կուլյ ընդո-  
րինակման վալրեր:

Սեկուալ հակումների առաջացումը կան-  
խել հսկողությամբ, պահպաննելով լեռեխաններին  
ցինիկ գարձվածքներից, մեկ սեոի մլուսին հե-  
տապնդելուց, վոր հաճախ անցնում ե սովորա-  
կան չարաճճության սահմաններից:

Իսկ ծանր գեղքերում, սեկուալ-տգրեսիվ  
լեռեխաններին առանձնացնել, կամ վորպես պսիխո-  
նեվրոտիկների՝ ուղղել համապատասխան մանկ-  
հիմնարկը՝ բժշկվելու:

### I ԱՍՏ. ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍԵՌԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒ- ԹՅՈՒՆԸ

1 աստ. դպրոցականի սեռական լուսավո-  
րությունը մի կողմից եպիզոդիկ բնությ պիտի  
կրի, նախադպրոցականի հասակի նման, մլուս  
կողմից՝ աստիճանաբար պլանալին ձևով կապվի  
Պետ. Գիտ. Խորհի (Պ. Տ. Խ.) ծրագրին կոմպլեք-  
սալին ձևով:

Յեթե նախադպրոցականի սեռական լուսա-  
վորությունն եպիզոդիկ բնուլիթ կրելրվ լինում ե  
նախադպրոցականի հարցերին պատասխանելը,  
կամ ոնանիստական հակման սանձահարման մի-  
ջոցները, 1 աստ. դպրոցականի սեռական լուսա-  
վորությունը կարող ե կատարվել ուսուցչի նա-  
խաձեռնությամբ այս կամ այն դեպքի առթիվ,  
որինակ՝ աշակերտի ցինիկ խռոք գործածելու  
առթիվ, աղաների աղջիկներին հետապնդելու  
առթիվ և այլն, վորի ընթացքում պարզ բան ե,  
պետք ե զգուշություն պահպանել տերմինների  
մեջ և խուսափել թերի բնուլիթ տալուց:

Դպրոցական ծրագրային կոմպլեքսները կադ-  
մելիս պետք ե ընդգրկել հետևյալ կենսական  
լերնությունները՝

1. Մահվան անհրաժեշտություն մարդու,  
կենդանու և բույսերի մեջ:

2. Կյանքի պահպանման և ուժեղացման կա-  
րևորությունը:

3. Կյանքի շարունակության կարևորությունը  
բազմացման միջոցով բույսերի, թռչունների  
և կաթնատունների մեջ, վորի կոնկրետ ձևերը  
նրանք դիտակցում են կյանքում, շրջապատում,  
եքսկուրսիաների ժամանակ:

ԵԵՐԿՐՈՐԴ ԱՍՏ. ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍԵՌԱԿԱՆ  
ԲՆԱՉԴՆԸ, ՆՐԱ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԵՎ  
ԼՈՒՄԱՎԱՀՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա աստ. դպրոցականի հաստակն արբունքի  
շրջանն ե, վորի ընթացքում սեռական որդաննե-  
րի զարգացման հետ միասին հեղաշրջվում ե և  
ամբողջ որդանիզմը՝ թե ֆիզիկապես և թե հո-  
գեբանորեն:

Մարմնի բոլոր մնանքն սկսում են ուժեղ  
աճել, փոխությունները և պատրաստվել ինքնուրուլն  
ստեղծագործական աշխատանքի:

Փոխվում ե բնավորությունը: Նոր եմոցիա-  
ները, փոխելով միտքը և զգացումները, դպրո-  
ցականին դարձնում են անճանաշելիի:

Սեռական բնազդը բավականաշափ դիմե-  
րենցիացիայի լենթարկվելով, դեպի հակառակ  
սեռը տածած հակ լան կամ հետերո-սեկսուալ  
բնություն են ստանում և արտահայտվում ե սիրա-  
հարության, զուլգերի բաժանող խաղերի ձրգո-  
ման, համբուրվելու, նամակազրություն ունենա-  
լու ձգտման մեջ: Տարվում են վեպերով, կանո-  
ցի մերկություն պատկերացնող նարներով,  
վերջապես, սեռական եներգիան ստեղծագործա-  
կան դորժադրություն չգտնելով, փոխվում ե  
ոնանիզմի, կամ վաղաժամ սեռական մերձեցման:

Ա աստ. դպրոցականի սեռական դաստիարա-  
կության խնդիրներն են՝

1. Յերևան հանել լերկու սեռի դպրոցականների ապրումների ալատուլողիան:

2. Հետ պահել դպրոցականների երոտիկմը զրգուղ հանգամանքներից դեպի ֆիզկուլտուրան, հասարակական ակտիվ աշխատանքը, այսինքն՝ սուբլիմացիայի լենթարկել նրա սեռական եներգիան մարքսիստական տեսակետից, հակադըելով անցլալի:

1. բուրժուական դասաւորին կաղմն,

2. անկուսակցականությանը

3. անհատականությանը,

4. եքսցենտրիզմը,

5. կրոնական մըստիկի իդեոլոգիան,

6. ուսման պասուիվ մեթոդներին,

7. պարագ աղինամիկ դըությանը,

8. վերացականությանը,

9. դպրոցի և ընտանիքի անջատմանը,

1. պրոլետարական դասաւորին կաղմն,

2. կուսակցականություն,

3. կոլեկտիվիզմ,

4. սոցիոցենորիզմ,

5. մատերիալիստական դաշտիականիզմ,

6. ուսման ակտիվ մեթոդներ,

7. հատախուզական մեթոդներ և արտադրական աշխատանք,

8. պրակտիզմ,

9. դպրոցի և ընտանիքի սերտ կապ:

II աստ. դպրոցականին սեռական դասաւորիացակությամբ պիսք եւ սովորեցնել զգուշուն պահպանել ընկերների ընտրության մեջ, կինույի և սպերայի վերաբերյալ լինել ընտրող, խուսափել հակադեղարվեստական գրականությունից, քրեական քրոնիկայից: Հաշվի տոնել վաղաժամ դրամ վաստակելու կողմերը, մաքառել ալկոհո-

լիզմի, ծխելու դեմ և այլ միջոցներով բարոլական հիմք գցել պատանիների մեջ:

Ոժանդակ միջոց են անկետաները, վորով կարելի լե լեռնան հանել դպրոցականներին հետաքրքրող հարցերը: Անկետան պիտի ունենաւ ալսպիսի հարցեր, որինտկ՝ «Բնչ եք ցանկանում իմանտը մարդու ծնունդի մասին», կտմ այն ձեռվ, ինչպես լես դիմեցի Յերևանի Ա տատ. դպրոցներից մեկի վերջին խմբերին, վորակես առողջապահության դասատու, վորի մասին կհիշեմ ստորև:

## ԱԱՏ. ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍԵՌԱԿԱՆ ՀՈՒՍՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ա տատ. սեռական լուսավորությունը պիտի շոշափի հետեւալ խնդիրները՝ ծանոթացնել դպրոցականին իր մարմնի լրիվ կազմության հետ, ընդհանուր անտառմիալին, Փիզիոլոգիալին և բիոլոգիալին կցելով սեռական որդանների անտառմիան, Փիզիոլոգիան և հիգիենան, վորակեսպի նրանք տեղական լինեն սեռական որդանների հսկայական նշանակությանն ու ֆունկցիալին, վորովհետեւ այդ որդաններն արրունքի շրջանում իրենց բնական փոփոխություններով շարժում են դպրոցականի հետաքրքրությունը և իրենց վրա կենացնացնում նրա ուշադրությունը:

Այս տեղեկությունները պարզում են լի աստ.  
դպրոցականին, վոր սեռական որգաններն ամե-  
նակորենից որգաններից են, նրանց նետ է կապ-  
ված ծնողի պարտականության նը յեվ նրանց  
առողջաբարութիւնը ե կախված նետազա սերնդի  
տուսդօր թյունը.

Հասկանալով սերմսահասության և դաշտանի  
նշանակությունը կրանքի մեջ անմիջորեն ման-  
կավարժի կամ բժշկի գիտական ձևով տված  
նլութիւն, լի աստ. դպրոցականը գիտակցաբար  
հետ կվանի անկոչ լուսավորիչների բացատրու-  
թյուններն ու անմիտ խրատները և հանգիստ  
կանցկացնի արբունքի փոթորկալից շրջանը,  
գիտակցաբար խուսափելով ոնանիզմից և վաղա-  
ժամ սեռական մերձեցումից:

Վերոհիշյալ բացատրությունները պետք ե  
տալ մեծ հմտությամբ, տակտով, շտա լուրջ և  
տուանց լերկմիտ ցուցումների:

Այս դերը վերապահվում ե դպրոցական  
բժշկին, վորը բացի վերոհիշյալ բացատրություն-  
ներից, ծանոթացնում ե և սեռական կրանքի  
պատոլոգիալի՝ վեներական հիվանդությունների  
հետ, վորպես չարիքի՝ անհատի, ընտանիքի,  
ժառանգության և հասարակության համար, ընդ-  
գծելով բիոլոգիական հասունության կարևորու-  
թյունը, ժուժկալության հսկայական նշանակու-

թրունն առողջութիւնն համարս Բժիշկը ծանոթացնում ե ալկոհոլիզմի և ծխելու վնասակար հետևանքների հետ սեռական խնդրում։

Իբրև լրացում ասածներիս, Բժիշկը վերջին խմբակներում ընթերցանութիւնն և մտքերի փոխանակութիւնն նյութ և դարձնում գրականութիւնն նշանավոր լերկերը, ինչպես որ «Աւրվականներ» և այլն։

Սեռական լուսավորութիւնն մնացած մասը՝ հասարակական և բարոյագիտական հիմունքներով մոտեցումը, ինչպես ամոթի զգացման զարգացումը, սերը գեղի պարկեշտությունը, գեղի գեղեցիկը, մաքուր սիրո վերլուծությունը, գեղի իգական սեռը հարզանքի վերաբերմունքը, դպրոցականին սոցիալական հասունութիւնն կարենությունը ցույց տալը վերապահվում ե մանկավարժին (դաստիարակին), վորը զըռւլցով, ընթերցանութիւնը, նյութերի քննադասութիւնը և մտքերի փոխանակութիւնը աշխատում ե բարոյական սերմեր գցել աշակերտի մեջ։

Այստեղ կարելի լե մատնանշել գրականութիւնն մի քանի նշանավոր լերկեր, ինչպես Շիրվանդադեցի «Բառար» և այլն։

Վերջին դերը սեռական դաստիարակութիւնն և լուսավորութիւնն ինդրում՝ աշակերտության մեջ սեռական սանձարձակության դեմ պայմա-

բելու գործը զերտահվում ե աշակերտական  
կաղմակերպություններին՝ կոմիերիտմիությանը:  
«Կոմիերիտմիությունը, ասում ե Պիստրակը, հան-  
դիսանում ե այն հզոր հոսանքը, վորը հեղափո-  
խական կովի շուրջն ե ժողովում լերիտասար-  
դության ամենալավ ուժերը: Կոմիերիտմիությու-  
նըն ե կաղմակերպում կյանքն առաջնակարգ  
գաղափարների շուրջը, կտպելով հասարակության  
և եռակ ուղղությունները լերի տասարդության  
իդեալական ձգումների հետո:

Յեթե այդ այդպես ե, ուրեմն կոմիերիտմի-  
ությունը կարող ե և պետք ե լինի ամենահզոր  
գործիքը մանկավարժության ձեռքին աճող  
սերնդի առողջացման գործում:

Բացի վերոհիշլալից, պետք ե տվելացնենք  
և այն, վոր սեռական դաստիարակության և սե-  
ռական լուսավորության խնդիրներում ծնող-  
ներին և մանկավարժներին աջակցելու համար  
պետք ե ունենալ ոժանդակ հիմնարկություն,  
պեղալոգաբժշկական կօնսուլացիա:

Վորպես առողջապահության դաստուր,  
ցանկանալով շոշափել սեռական լուսավորության  
խնդիրները Յերեանի Ա աստ. դպրոցներից մեկի  
վերջին խմբում, լես նախորոք դիմեցի անկետա-  
ների՝ հետևյալ ձևով.—

## «Հնկերներ,

Դուք բոլորդ լինելով արդեն 16—18 տ. և ավելի հասակում, անցել եք մի վորոշ կրիտիկական հասակաշրջան, վոր կոչվում ե փոփոխական շրջան, կամ արբունքի շրջան և ներկայումս բոլորիդ համար պարզ ե, թե ինչպիսի կտրուկ տարբերություն կտ ձեր ներկա պատահեկան (կամ լեզվատարդարկան) և նախկին հասակի միջև։

Դուք նկատում եք, վոր ձեր ներկա հասակը տարբերվում ե նախկինից վոչ միայն արտաքին նշաններով, ինչպես հասակի բարձրությունը, արիությունը, դեմքի վ մաքմնի ալլ մասերի վրա առաջ լեկած բուսականությունը, ձախի ուժեղությունը և այլն և այլն...ձեր մեջ կատարվել են խոշոր ներքին հոգեբանական և ֆիզիկոքիմիական փոփոխություններ, այնպես վոր ամեն մեկդ թվում եք ալլ մարդ, կարծես առաջվանը չեք, կարծես ձեզ փոխած լինեն։

Վորտեղից են առաջ լեկել արդ փոփոխությունները և ինչու համար են առաջ լեկել՝ արդ կարծում եմ ձեզ շատ քիչ ե հայտնի, կամ բոլորովին հայտնի չե, ուստի, ստանալով այս մաքուր թերթիկները, ինդրում եմ գրանցեք ձեր ներկա հասակի ներքին և արտաքին առանձնահատկությունների, ձեր ներկա ապրումների այն

հարցերը, վորոնց մասին կցանկանալիք բացատ-  
ըռւթյուններ ստանար:

Իսկ լեռ իմ հերթին, ծանոթանալով ալդ  
հարցերի հետ, հետագա իմ զբուցով կաշխատեմ  
բացատրել և բավարարել ձեղ բոլորիդ.

Թերթերի վրա պետք են չեք միայն ձեր  
խուժը և տարիքը։ Աղջանունները պետք չեն—  
թերթերը պետք են լինեն անոնիմ։

Անկետանելը տվին հետևյալ պատկերը.

Համար	Տարիք	Տարբերակ					Համար	Տարբերակ	%	
		16	17	18	19	20				
		Համար	Համար	Համար	Համար	Համար				
V-1	32	3	16	6	7	121	48	Բիուռգիտական	27	10 %
V-2	35	2	5	17	5	6	80	Ֆիզիոլոգիտական	70	25 >
							Պասուլոգիտական	111	40 >	
							Անողազանություն	17	6 >	
							Անոտոմիայից	27	10 >	
							Անտիօլոգիտայից	51,8	>	
							Գիինուուգ.	20,8	>	
							Ենցագայային	31,0	>	
							Մասացածն անուընդ			
2	67	2	8	33	11	13	201	78		

Ծանոթանալով անկետաների բովանդակության հետ, ինձ համար պարզվեց, վոր սեռական կյանքը ամենալայն իմաստով և մանրամասնությամբ ծանօթ ե (5-րդ խմբի) աշակերտությանու

Անկետաներն ասացին ինձ, վոր 5-րդ խմբի

աշակերտության համար սիրո առարկան՝ վոգե-  
վորության և ստեղծագործական աշխատանքի  
իմպուլս տվողը հեռանկարը չե, վոր հատուկ է  
այդ հասակին, այլ սովորական մի բան։ Սերը  
միայն կիրք ե, հաճույք, առանց իմաստի և պա-  
տասխանատվության հետևանքի։ Սեռական  
խնդիրը մի նյութ ե, վորի մասին կարելի լե  
խոսել սանձարձակ, առանց քաշվելու, ամոթի,  
կենցաղալին տղեղ դարձվածքներով։

Մի քանի որինակ տված հարցերից և խոս-  
տավանություններից՝

1. Սեռական հարցը ինձ համար լեղել ե  
շատ հետաքրքիր։ Այդ զգացմունքն արթնացել ե  
իմ մեջ շատ վաղ, 10—12 տարեկան հասակում։
2. Սերը կրքի անմիջական բավարարումն ե  
և ուրիշ փոշինչ։

3. Յերկարաժամկետ սիրահարությունը հոգեկան  
հիվանդություն ե։

4. Սեռական հարաբերությունը դվարճու-  
թյուն ե։

5. Սեռական հարաբերություն չունենալու  
նպատակը և հետեւանքն անհասականալի լե ինձ  
համար։

6. Արդյոք ժուժկալությունը հասուն մտց-  
դու համար մնասակար չե։

7. Ինչից ե առաջանաւմ կիրքը և այլն.

8. Ընկ. բժշկուհի, շատ ուրախ եմ, վոր  
նման բաներ եք սարբում, վորով մենք կարող  
ենք արտահայտվել և այլն:

Այս բոլորը պարզելուց հետո լես վորոշեցի  
գասախոսութիւնն սութիւն սնցնել հետեւալ կերպ՝  
ոգտագործելով աշակերտութիւնն սեռական խընդ-  
րի վերաբերյալ բոլոր գիտեցածը, դնել այն նոր՝  
գիտական և կուլուուրական հունի մեջ, բավա-  
րարելով նրանց բոլոր հարցերին։ Այնուհետև,  
առողջապահութիւնն կուրսում աշակերտութիւնն  
հետ նախորդ անցնելով բոլոր սոցիալականն  
հիվանդութիւնները՝ գլխավորապես վեներականն  
հիվանդութիւնները, ալկոհոլիզմը և ծխելու  
նշանակութիւնն առողջութիւնն համար։ Ուսում-  
նասիրելով նրանց վերոհիշյալ անկետաները, լես  
գործնականապես անցա սեռական խնդրին հե-  
տեւալ ձեերով։

«Ընկերներ,

Նախքան ձեր հարցերին բավարելը, լես  
պետք ե ասեմ հետեւալը. վոր մենք ընդառաջե-  
լով կուլտուրալին, պիտի գիտենանք, վոր ամս-  
թի զգացումը և սերը դեպի գեղեցի ը, վոչ  
միտին առարկան, այ. և դեպի գեղեցիկ խոսքը,  
գեղեցիկ միտքը, զեղեցիկ գործը—ահա այն լեր-  
կու լծակները, վոր բարեցնում են մարդու

բարոյականութիւնը և մտցնում մարդու մեջ  
պարկեշտութիւնն և կուտուրա:

Մարդը նմանվում է անասնին իր ֆիզիլո-  
գիական (կենսաբանական) պահանջներով (բնագդ-  
ներով, կրքերով), բայց ատրբերվում է բանա-  
կանությամբ, հոգեբանությամբ։ Մարդու կրքերը,  
բնագդներն այն ժամանակ են հատուկ մարդուն,  
մարդկային, յերբ նա դատիարակվում է այնպես,  
վոր ներդաշնորհութիւնն է ստեղծվում նրա ֆի-  
զիոլիագական և հոգեբանական պահանջների  
միջև։ Կամ թե չե իր հզոր կամքի ուժով՝ նա  
ինքն է ստեղծում այդ ներդաշնորհութիւնը։

Սիրո զգացմունքը, կամ կիրքը մեկն է այն  
ֆիզիլոգիական պահանջներից՝ վոր ամենից շատ  
և պահանջում ներդաշնորհութիւնն հոգեբանու-  
թյան հետ, հակառակ դեպքում լոկ ֆիզիկականը  
անտանացնում է մարդուն։

Զեր պատանեկան հաստիքը և յերիտա-  
սարդների հասակը ամենազգայուն հաստին է  
դեպի գեղեցիկը, դեպի ամոթի դգացմունքը, և  
այդ յերկու հզոր լծակներն անպայման պետք է  
զարգանան այդ հաստիկում։ Իսկ յեթե նրանք  
բացակայում են, դրա մեջ մեղավոր են կամ հի-  
վանդագին ժառանգութիւնը կամ շրջապատող  
հիվանդագին յերևույթներն ու պայմանները,

ալսինքն՝ դասախրակության բացակայությունը,  
վատ ընտանիքը, վատ շրջապատը:

Սեռական կլանքում չսալթաքելու համար  
իբրիտասարդությունն ամենից առաջ լավ ծանոթ  
պիտի լինի այս ֆիղիոլոգիական պրոցեսների  
հետ, վոր կտտարվում են նրա որդանիզմի մեջ,  
ալսինքն՝ պիտի ծանոթ լինի վոչ միայն որդա-  
նիզմի կազմության հետ, այլև այդ պրոցեսների  
նպատակի յեվ հետեվանի հետ:

Դուք անտառոմիալից (մարդակազմությունից)  
գիտեք, վոր մարդու մարմինը մի մեծ գործա-  
րան ե՝ զանտղան բաժամունքներից բաղկացած:

Դուք գիտեք, թե ինչու համար ե դրանցից  
ամեն մեկը, ինչպես՝ կմախքը, մկանները, ներ-  
վալին համակարգությունը, մարսողության, շըն-  
չառության և արյան շրջանառության գործա-  
րանները, նյութերի փոխանակությանը նպաստող  
գործարանները, մի շարք գեղձեր և, վերջապես,  
սեռական գործարանները:

Գեղձերի մասին թույլ հասկացողություն  
ունենք, իսկ սեռական գործարանների մասին  
համարյա վոչ մի, կամ չափաղանց թերի բան:

Այս վերջին յերկու տեսակի գործարանների  
գեղձերի և սեռական գործարանների դերը որ-  
դանիզմի մեջ չափաղանց մեծ ե, և իս պետք ե

ծանոթացնեմ ձեզ դրանց կազմի և նշանակության հետ:

Յեմե քննաղատորեն մռաենանք մարդու մարմնի կազմությանը, կտեսենք, վոր նրա գործորանները և արելի յե բաժանել լերեք խմբի. առաջին խմբին են պատկանում ձեզ արդեն ծանոթ գործարանները՝ նրանց նպատակն ե ծառալել իրեն՝ անհատին և կոչվում են բուսական (վեգետատիվ) գործարաններ։ Յերկրորդ խմբակը սերևզի (գլեներահիվ) գործարաններ, կամ սեռական գործարաններ։ Դրանց նպատակն ե միայն սերունդ արտադրել, այսինքն՝ սաեծել անհատից մի նոր անհատ, նոր սերունդ, նոր կյանքի ողակ և այդպիսով շարունակել կյանքը դեպի հավիատենականություն կամ անմահցնել անհատին։

Սեռական գործարանների գործողությունը կարծես բոլորովին անկախ, ավտոնոմ լինի առաջին գործարաններից, սակայն մեր մարմինն ունի մի ուրիշ, լերրորդ տեսակի գործարաններ, վորոնք կապում են այդ լերու ավտոնոմ աշխարհներն իրար հետ։ Դրանք ներգատող գեղձերն են։

Ուրեմն, իմ զրուցի նյութը պիտի լինի վերջին լերկու տեսակի գործարանների կազմությունը և նշանակությունը։ Դուք լմ ասածերից ամեն մեկդ կքաղեք ձեր հարցերի պատասխանը, վոր տվել եք անկետալի մեջ։

## ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՀԱՍԱԿԸ ՅԵՎ ՆՐԱ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

Բուսերի ցանքը, ջրելը և քաղճանն  
ունեն իրենց հատուկ ժամանակները:

Մարդը նման է բուլսին և նրա հաստկի  
ամեն մի շրջանն ունի իր զգացման հատուկ  
խնդիրները, վորոնք անպայման պիտի լուծվեն  
իր ժամանակին:

Ինությունը մարդու զարգացման գործում  
կտրծես նույնակես աշխատանքի բաշխում և կա-  
տարել նախադպրոցական շրջանն ունի իր զար-  
գացման հատուկ խնդիրները, զպրոցականը, վորի  
մեջ և մտնում և պատանեկական հասակը՝ իր  
խնդիրները:

Յերեխան սաղմնալին դրության մեջ տին-  
պիսի արարած ե, վորը պոտենցիալ կերպով  
պարփակում ե մարդկային բոլոր ընդունակու-  
թյունները և հնարավորությունները:

Այդ ընդունակությունները յերեան են գտ-  
լիս և բացվում նրա մեջ աստիճանաբար, նրա  
կյանքի զանազան շրջաններում, զանազան հտ-  
սակներում, զանազան խորությամբ, տարբեր  
չափով ու թափով:

Ներկայումս, մեզ հետաքրքրում ե, թե յերե-  
խան ինչպիսի ճանապարհներով ե զարգանում,  
սկսած սարմատացին դրությունից մինչեւ պատա-  
նեկական շրջանը:

Սկսած սաղմնալին կամ արգանդալին շրջանից մինչև պատանեկան շրջանը մարդու զարգացումը լեռեք թափով ե ընթանում.

առաջինը՝ սաղմնալին կամ արգանդալին, լեռկրորդը՝ մինչև սեռական հասունացման շրջանը թուլ, և անդադ զարգացում և լերրորդը՝ վերջին (արրունքի) շրջանում՝ չտփազանց տրագ, չտփազանց ինտենսիվ զարգացում։

Անհատի մեջ այս լեռեք թափի ընթացքը զանազան պատճառներից (հիվանդությունները, տնտեսական և սոցիալական պայմանները) կարող ե դանդաղել, կամ նույնիսկ ընդհատվել։

Հիվանդությունները և տնտեսական դրությունը կարող ե ֆիզիկական զարգացման վրա անդրադառնալ, իսկ սոցիալական պայմանները՝ նրա կուլտուրական և հոգեկան զարգացման վրա։

Այս բոլորը ցուց են տալիս, վոր պատանու ընդհանուր զարգացողությունը վորոշելու համար սխալ կլինի, լեթե մենք առաջնորդվենք լոկ նրա տարիքով, ինչպես ընդունված է կլանքի մեջ։ Որինակ, մեկին հասուն պատկերացնելու համար ասում են՝ «քսան տարեկան մարդ ե»։

Նորմալ պատանեկական հասակ ասելով, մենք, անկախ պատարոգիական (հիվանդազին) կամ տնտեսական և սոցիալական աննպաստ պայմաններից, պետք ե հասկանանք հետևյալ չորս

հասակները, վորը պետք եւ միաժամանակ անց-  
կացրած լինի պատանին.

1. Խըռնոլոգիական հասակ (քանի տարե-  
կան ե):

2. Ֆիզիոգիական հասակ (ինչպես եւ զար-  
գացած ֆիզիկապես):

3. Պահանջման հասակ (ինչպես եւ զար-  
գացած նրա հոգեկան աշխարհը):

4. Մանկավարժական հասակ (ինչպիսի ու-  
սումնական և կուլառուրական առաջադիմություն  
եցուց տարիս):

Պատանու թե Փիզիկական և թե հոգեկան  
աճման համար մարմինը գործադրում եւ եներգիա  
և ալղ եներգիան վերցնում եւ իր միջից, վորը  
միակ աղրլուրն եւ:

Պատահում եւ, վոր յեթե Փիզիկական զար-  
գացումը շատ եներգիա յեցը գործադրում, հոգեկան  
և մտավոր աճումը ժամանակավորապես դանդա-  
ղում եւ, և հակառակը:

Պատանեկական հասակն ունի իր զարգաց-  
ման շրջանները՝ ետապները։ Առաջին՝ ետապը  
12—14 ա. հասակն եւ, յերբ սեռական հասունա-  
ցումը սկսվել եւ, բայց ընթանում եւ գաղտնի՝  
որդանիզմի ներսը։

Յերկրորդ ետապը՝ 14—16 տարեկան հա-

ստկն ե, յերբ արտաքին նշաններով պարզ  
արտահայտվում ե սեռական հասունացումը:

Եերրորդ ետապը 18—20—21—24 տ. հա-  
ստկն ե, վորի շրջանում սեռական հասունացումը  
վերջանում ե:

Բիոգենետիկ սկզբունքի հետևորդների  
կարծիքով, անհատն իր զարգացման ընթացքում  
անցնում ե պատմության բոլոր շրջաններն, իսկ  
պատանեկան հասակի առաջին շրջանը նրանք  
նմանեցնում են պատմության ֆեղալական շրջ-  
անին, վորովհետեւ պատանու մեջ նկատվում են  
ասպետական բնութագծեր՝ խիզախություն, հերո-  
սություն, անձնազոհություն, հավատարմություն  
ճարպկություն և ալլն:

Պատանեկական հասակի յերկրորդ շրջանը  
բնորոշվում է նրանով, վոր զարգանում են պա-  
տանու մեջ ընկերությունն և սեր դեպի  
հասարակությունը, դեպի շրջապատը, կոլեկտիվը:

Ընդհանրապիս պատանեկություն կնշանակի  
մանկությունից ձեռք բերած բոլոր բնդունակու-  
թյունների ամրացում, լայնացում և խորացում:

Մանուկը զարդացնում է իր բնդունակու-  
թյունները քանակապես, իր Փիզիկական կլանքն  
ամրացնելու նպատակով:

Իսկ պատանին՝ վորակապես ե հիմք գցում  
ստեղծագործական աշխատանքի:

Հասուն շրջանն ոգատգործում և ընդունակությունների քանակը և վորակը, այսպես ասած սինթեզի լեռ յենթարկում իր ունեցածք՝ ստեղծագործելու համար:

Այսպիսով, անհատի դաստիարակության նպատակը պետք է լինի՝ նպաստել, վոր արդիքության մտնելու մատանեկության հաստիները լրիվ անցնեն:

Յերևան հանել անհատի մեջ պոտենցիալ կերպով թագնված բոլոր ընդունակությունները և հսարակությունները, վարժեցնել և ամրացնել նրանց, վորպեսզի նա խրոնոլոգիական հասակի հետ ունենա համապատասխան ֆիզիոլոգիական, պահառական և մանկավարժական զարգացում, վոր հասուն հաստիք լինի լրիվ և արդյունավետ:

### ՍԵՐԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՉ-ԱՌԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԵՐՔ են զարգանում և ինչու համար են մարդու սեռական գործարանները:

ՅԵՆԵՆՔ սեռական գործարանների զարգացումը սաղմի մեջ:

Սաղմը հրաւովում և բազմաթիվ բջիջներից բջիջները, բաժանվելով զանազան խմբերի կամ հյուսվածքների, կազմակերպում են սաղմի որպանները: Արդ բջիջներից մի փոքրիկ խմբակ

Խաղմի կլանքի 5-րդ շաբաթում քաժանվելով  
ընդհանուրից, խմբվում ե վաղնաշարի լերկու-  
կողմը, գոտկատեղից ցած, լերիկամներին կլց և  
հիմք գցում ապագա սեռական որդաններին:

Մարդու մարմինը, ինչպես տեսնում ենք,  
կազմված ե հյուսվածքներից, և այդ հուսվածք-  
ները, ինչպես որդանները, բաժանվում են լեր-  
կու խմբի, մեկը սազմի ժամանակավոր գոլու-  
թյունը պահպանելու համար — վեգետատիվ-բու-  
սական, մյուսը՝ նրա կլանքը անմահության հետ  
կապելու՝ ստեղծագործելու համար — գեներատիվ-  
սեռական հուսվածք։ Վերջին տեսակի հյուսվածք-  
ներից են կազմվում սեռական դորձարանները և  
սեռական գեղձերը։

Աճելով և բազմանալով, այդ հյուսվածքը  
2-րդ ամսվա վերջում սկսում է տարրեր սեռերի  
հատկություն ձեռք բերել, այսինքն՝ արական և  
իդական գեղձերի հյուսվածք կազմել, վորոնց  
արտօնագրությունը պիտի լինեն սեռական բջիջ-  
ներ, վորոնցից իգականը ձվիկներ, արականը՝  
սերմնաթելեր-սպերմատոզոֆիդներ։

Վոչ ձվիկը և վոչ ել սերմնաթելերն առան-  
ձին-առանձին նոր որդանիզմներ կազմել չեն  
կարող, մինչև վոր իրար հետ չմիանան՝ կոնյու-  
գացիալի չենթարկվեն, իրար չբեղմնավորեն։

Բեղմնավորված սեռական բջիջների կեն-

սունակութլունը կախված ե շատ հանգամանք-ներից, վորոնց մեջ ամենատկարեորը որդանիզմների հասունութլունն ե, այն որդանիզմների, վորոնց սերմնարջիջներն իրար բեղմնավորել են:

Սեռական զեղձերի սեռական բջիջներ արտադրելու ընդունակութլունը յերկու սեռերի մեջ տարրեր ե:

Արտական սեռական զեղձերն անհատի կյանքի ընթացքում 240 միլիտրդ սպերմատոզոփներ են արտադրում, իգականն ընդամենը 200 կենսունակ ձվիկ տարեկան 12, ամսական մեկ, հազվագյուտ զեպքերում յերկու հատ: Իսկ եթե յերկու հասուն ձվիկներ միաբաժանակ բեղմնավորվեն, կծնվեն յերկվորյակներ:

Արտական սերմնարջիջները կենսունակ չեն՝ 2-3 օրից վոչչանում են:

Իգական բջջի կորիզն իր մեջ պարունակում ե մեկ սեռի նյութ, իսկ արտական սերմնարջիջի կորիզը՝ յերկու սեռի նյութ:

Արտական սերմարջիջներն են բնորոշում սեռը: Բայց այս կամ այն սեռի կազմակերպման ինդրում մեծ դեր են կատարում թե ներքին և թե արտաքին հանգամանքները, որինակ՝ ուժեղ սննդառութլունը նպաստում ե իգական սեռի կազմակերպմանը: Պատերազմներից հետո արտական սեռի գերազանցութլունը նոր ծնվածների

մեջ բացատրվում ե անտեսական աննպաստ  
պայմաններով և սննդի նվազումով:

Մանուկն իր արգանդալին կլանքի վորոշ  
շրջանում լերկսեռ ե, արինքն՝ կաղմված ե թե  
արական և թե իգական սեռական ըջիջներից:

Այնուհետև վորոշ պայմաններ գալիս են  
հանելու մանուկին այդ դրութլունից, տալով  
նրան վորոշ թեքում՝ արական կամ իգական:

Յերկրորդ ամսի վերջերից մինչև չորրորդ  
ամսվա վերջն այն շրջանն ե, լերը սաղմը վեր-  
ջացնում ե այս կամ այն սեռական թեքումը և  
կազմակերպվում:

Այդ թեքումն առաջ ե գալիս թե արտաքին  
և թե ներքին պատճառներից:

Սաղմին լերկսեռ դրութլունից դուրս բերող  
հանգամանքների հարվածը կարող ե լինել զա-  
նազան ուժգնության: Այդ պատճառով ել սեռա-  
կան թեքումները լինում են զանազան աստիճա-  
նի, վորն արտահայտվում ե թե անատոմիապես  
և թե հոգեբանորեն:

Անտ, թե ինչն ե պատճառը, վոր զանաղան  
սեռի անհատների մեջ մենք տեսնում ենք  
հակառակ սեռի հատկությունն:

Բիոյոգիական պատկերն իրավունք ե տալիս  
տեսլու, վոր ամեն մի անհատի մեջ կտ լերկու-

սեռի հատկություններ, և ալս կամ այն սեռն  
ընդգծված ենորմայ կամ նվազ չափով:

Յերբ ոչ սեռի լերեխալիք մեջ ակնհայտ են  
հակառակ սեռին հատուկ անհատութիւնական հատ-  
կություններ, նա կոչվում է հերմոֆրոդիտ:

Միաժամանակ ներքին սեռական գործարան-  
ների կազմության հետ հիմք են դցում և կազ-  
մակերպվում արտաքին դործարանները, վորոնք  
մինչև լերկրորդ ամսի վերջը նույնպես վոչ մի  
թիքում չունեն, իսկ չորրորդ ամսի վերջում  
արական կամ իդական թեքում են ստանում:

Սեռական գործարանների ամենագլխավոր  
ելական մասը սեռական գեղձերն են, ուստի լես-  
գլխավորապես նրանց վրա յեմ դարձնում ձեր  
ուշադրությունը:

Իդական սեռական գեղձերն իրենց սերմ  
արտադրող խողովակներով, վորոնց լայն մասը  
արգանդ ե կազմում, մնում ե արգանդի մեջ,  
վոքը կոնքում:

Իսկ արտական սերմագեղձերն իրենց սերմ-  
նատար խողովակներով իջնում են ցած, որգա-  
նիզմից դուրս, և սերմատար խողովակը միանում  
ե միզատար խողովակի հետ:

ՍԵՐԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԿԱՄ ԱՐԲՈՒՆՔԻ ՆՇԱՆ-  
ՆԵՐԸ

Այենին հայտնի լե այն կտրուկ փոփոխու-  
թյունը, վոր տռաջ և գոլիս պատանեկական  
հասակում, պատանու սեռական հասունացան  
շրջանում, լերը հասունանում և զործունելության  
մեջ են մտնում սեռական գեղձերը։ Պատանին  
բոլորովին կերպարանափոխվում ե թե Փիզիկա-  
պես և թե հոգեպես։

Արբունքի շրջանը, կամ փոփոխական շրջանն  
սկսվում ե՝ աղջկանը 13—14—15 տարեկանից,  
իսկ տղայինը 14—15—16 տարեկանից և ընթա-  
նում ե չափազանց արագ։ 15—16 ից հետո մի  
փոքր դանդաղ թափով շարունակվում ե աղջկանը՝  
մինչև 18—20—22 տարին, տղայինը՝ 19—21—  
24 տարին, վարից հետո սեռական հասունացումը  
լրացած ե հաճարվում։

Սեռական հասունացման հատկանիշները  
կարելի լե բաժանել լերնու մասի՝

1. տռաջնակարգ հատկանիշներ՝ սեռական  
գեղձերի հասունացումը և 2. լերկրորդական  
հատկանիշներ, բոլոր Փիզիկական, մտավոր և  
հոգեկան փոփոխությունները, վորով տարբերվում  
են արական և իգական սեռերն իրարից։

Արտկան սեռական գեղձերի հասունացումը

այն ե, վոր գեղձերն ընդունակ են դառնում  
հասուն սերմնաբջիջներ կամ սպերմատոզոիդներ  
արտադրել:

Սպերմատոզոիդները հավաքվում են սերս  
մասպարկերում և սերմատար խողովակներով  
ամիսը մոտավորապես մեկ կամ լերկու անգամ  
նորմալ կերպով դուրս հոսում, դատարկվում,  
վորը կոչվում ե սերմնահոսություն:

Իգական գեղձերը հասունանալով, ընդունակ  
են դառնում ամիսը միայն մեկ անգամ հասուն  
ձվիկներ արտադրելու:

Գեղձերի այն մասում: Վորտեղ ձվիկ ե հա-  
սունացել (գրաֆիան բշտիկում) լորձաթաղանթը  
պատռվում ե և հասուն ձվիկը դուրս ենետվում:  
Դուրս նետված ձվիկն ընկնում ե ձվատար խո-  
ղովակի, կամ այսպես կոչված՝ ֆալոպիան խողո-  
վակի բերմանը և այդտեղից տեղափոխվում խո-  
ղովակի լայն մասը, վոր կոչվում ե արգանգ:

Մինչ այդ արգանգի պատերը փափկանում՝  
լորձաթաղանթն ուռչում ե արյունհոսության  
աստիճանի և, ալպիսով հող պատրաստում,  
վոր ձվիկը, բեղմնավորվելու դեպքում, հեշտու-  
թյամբ խորասուզվի աղղանդի պատի մեջ և կպչի  
նըան:

Մեռական հասունացման լերկորդական  
հատկանիշերն ամենից շատ աշքի ընկնողն են:

Ալդ հատկանիշերն սկսում են զարգանալ  
սաղմի արդանդալին կլանքի յերկրորդ մասից,  
այնպես, վոր նորածին մանուկներին մենք կա-  
րող ենք տարբերել իրարից սեռական վորոշ  
հատկանիշերով:

Իգական սեռի նոր ծնված մանուկն արդեն  
տարբերվում է արականից, բացի սեռական գոր-  
ծարաններից, իր ավելի փոքր քաշով ( $100$  գր.),  
քնքուշ կմախքով, փոքր ձեռք ու վոտքով, մարմ-  
նի յերկարությամբ ( $\frac{1}{2} - 1$  սանտ.), կոնքի ձևով,  
ուղեղի չափով:

Ծնվելուց մինչեւ  $13 - 14$  տարեկան հաստիը  
սեռական հատկանիշերը զարդանում են դանդաղ,  
աննկատելի կերպով ճնշված:

Այսուհետև արրունքի շրջանում զարդացման  
թափն ազատվելով վրոշ ճնշումից, չափազանց  
արագ և կտրուկ կերպով ե ընդգծում յերկրոր-  
դական այն հատկանիշերը, վորոնք ստեղծում են  
կնոջ և տղամարդու հատուկ տիպը:

Վորքան բարձր ե ցեղի զարդացումը, այն-  
քան սուր և և տիպերի տարբերությունը: Զար-  
դացման ստորին աստիճանի վրա այս տարբե-  
րությունը նշանաբար վում ե թուլ կերպով, որինակ՝  
նախամարդը:

Սեռական հասունացման ֆիզիկական յերկ-  
ողական հատկանիշերը հայտնաբերվում են

դանդի, կմախքի, մասնավորապես կոնքի, մկանաւլին ուժի, ճարպալին շերտի, դեմքի ընեհանուր ձեի, ձախի և ուրիշ սեռալին հատուկ ձեափոխություններով:

Սեռական զարգացման հոգեկան հատկանիշերը հայտաբերվում են սեռի տուանձնահատուկ հոգեբանական կտղմակերպումով և սեռական բնագդի զարգացումով:

Արբունքի առաջնակարգ և յերկրորդական հատկանիշերի առաջ գալը պայմանավորվում ե սեռական դեղձերի հասունացումով և իրենց ֆունցիայի մեջ մտնելով:

Մարդկանց և կենդանիների վրա կատարած ամորձատման բաղմաթիվ փորձերով և դիտողություններով ապացուցվել ե, վոր սեռական գեղձերի ֆունկցիան չափազանց մեծ դեր ե կատարում թե որգանիզմի կազմակերպման և թե սեռի կազմակերպման գործում:

Ամորձատվում են կենդանիները՝ ձին, լեզվնագանդեցնելու, բեռնակիր դարձնելու նպատակով:

Մարդիկ ամորձատվում են կրոնական աղանդի պահանջով (Խուսաստանում) կամ հարեմների ներքինիներ դարձնելու համար:

Իտալիայում կաթոլիկ լեկեղեցու տղա յեր-

գիշները սոպրանո ձայնը պահպանելու համար  
ելին ամորձտվում:

Ի՞նչ եր այդ ամորձտման հետևանքը:

Յեթե ամորձտվում եր տղան սեռական  
հասունացումից տուջ, նա զրկվում եր սեռական  
յերկրորդական հատկանիշերից՝ նրա տրտաքինը,  
վարքը, բնավորությունը կորցնում ելին արական  
հատկությունները և թեքվում դեպի իդականը,  
մորթը քնարականում, ճարպային շերտը հաստանում  
ե, դեմքին բեխ, մորուք չի բունում, կոկորդը  
չի զարգանում, հետեարար՝ ձայնը մնում ե բա-  
րակ, ձեռք ե բերում կանացի բնավորություն,  
պասսիվանում ե, լենթարկվող դառնում:

Ամորձտումը սեռական հասունացումից  
հետո, յերբ յերկրորդական սեռական հատկանիշ-  
ներն արդեն յերեան են յեկած, ալդպիսի զգալի  
փոփոխություն չեն տայիս, բայց և տինակես  
սեռական հատկանիշներն սկսում են թուլանալ,  
մազերը թափվում են, մորուքը նոսրանում ե,  
ձայնը բարակում, ճարպային շերտերն ավելանում  
են, մկանալին ուժը և սեռական բնազդը թուլա-  
նում են և ալին:

Սովորաբար ամորձտվածներն աստիճանա-  
բար հոգեպես ընկճվում են և դառնում մելամաղ-  
ձուտ, մելանիոլիկ:

Ալսպիսով՝ փորձերը համոզում են, վոր սե-

առկան լերկրորդական հատկանիշերի առաջ գոլը  
պայմանավորվում է միմիայն սեռական գեղձերի  
ֆունկցիալով:

Իսկ հասուն սեռական գեղձերի ակնհալտ  
ֆունկցիան մենք գիտենք, վոր սերմարզիջների  
արտադրություն եւ:

Գիտնականների մի ուրիշ ուղղությամբ կա-  
տարած փորձերը բերին այն լեզրակացության,  
վոր սեռական գեղձերի ֆունկցիան միայն սերմ-  
արզիջների արտադրությունը չե, վորի նպա-  
տակը սերունդ արատդրելն ե, այս այն ունի մի  
ուրիշ ֆունկցիա, վորի նշանակությունն անհատի  
ուգանիզմի համար չափազանց մեծ ե յեվ չա-  
փազանց կարեվոր:

Այսպես՝ աքաղաղի սեռական գեղձերը տե-  
ղափոխելով, այսինքն՝ մարմի մի ուրիշ մասում  
կարելով, աքաղաղը զրկվում է սեռական բջիջ-  
ներ արտադրելու ընդունակությունից, բայց նրա  
արական բնավորությունն իր բոլոր սեռական  
լերկրորդական հատկանիշերով չի փրխվում:

Յերիտասարդացման առաջին փորձն իր վրա  
կատարեց 72 տարեկան ծերունի գիտնական  
Բրուն-Սեկարը:

Վորոշելով, վոր ծերություն պատճառը սե-  
ռական գեղձերի թառամելն ե, նրանց ֆունկ-  
ցիալի դադարելը, նա լերիտասարդ կենդանիների

սեռական գեղձերից հյութ պտտրաստեց և սրբակեց իրեն։ Հետեւանքը լեղավ ան, վոր ծերունու մկանալին ուժն ավելացավ, աշխատուն սկությունը բարձրացավ, մաքսողությունը լավացավ և ալլն։

Ասպիսով պարզվեց, վոր սեռական գեղձերը յերկու ֆունկցիա ունեն՝ մեկը սերնդի համար՝ սեռական բջիջների արտադրություն, մյուսը՝ իր որդանիզմի համար մրտադրում և մի վորոշնյութ, վորը խառնվելով մեր արյան նետ, անցնում երգանիզմի մեջ և ներգործում նրա վրա։

Ալպիսով, վորոշվեց, վոր սեռական գեղձերը ներգատող գեղձեր են։

Ի՞նչ կնշանակի գեղձ։

Գեղձ կնշանակի մի որգան, վորը վորոշ հյութ և արտադրում, որինակ՝ թքի գեղձ, ստամոքսի հյութի գեղձեր՝ պանկրեասը՝ լենթաստամոքսալին հյութով, լուրզը, վոր լեղի լե արտադրում և ալլն։

Բալց սրանք սովորական գեղձեր են և վոչ ներգատող, վորոնք տարբերվում են առաջինից նրանով, վոր սովորական գեղձերն ունեն իրենց հյութի համար պարկեր և հյութատար խողովակներ կամ ծորաններ, վորի միջով դուրս ե. հոսում հյութը, իսկ ներգատող գեղձերը դուրկ են դրանից, նրանց արտադրած հյութն անմիջապես ծծվում է

գեղձերը շրջապատող արլունատար խողովակների  
մեջ և ալդպիսով ներզատվում արլան մեջ:

Բացի սեռական գեղձերից, մարդու և կեն-  
դանիների որդանիզմի մեջ կան մի շարք ուրիշ  
ներզատող գեղձեր, ընչպես վահանածեն գեղձեր,  
խափառը, վերլեբրիկամնալին, ուղեղի հավելվածքը՝  
ուղեղի հարուկը, վորոնք ինչպես և սեռական  
գեղձերն, ունեն իրենց զատուցք հլութը, վորը  
կոչվում է հորմն (հունարեն կնշանակի զրգուիչ):

Այդ հորմոնները ներզատվելով որդանիզմի  
մեջ, զրգուելով, ազդում են մարդու աճման և  
նրա թերի փոխանակման պրոցեսների վրա: Որի-  
նակ՝ լեթե ուղեղի հարուկը հեռացնենք, մարդու  
և կենդանիների աճումը կդադարի և նրանք  
կման թղուկ: Բացի հարուկից աճման վրա  
ազդում են և վահանածեն ու խափառ գեղձերի  
հորմոնները:

Այնուհետև պարզվեց, վոռ բոլոր ներզատող  
գեղձերի զատուցքը կամ հորմոններն են վարում  
բոլոր համակարգությունների համագործակցու-  
թյունը և վորոշումնեանց բոլոր գործառնություն-  
ների որինաշափությունը, լրացնելով այս տեսա-  
կետից նաև դաշտին համակարգության աշխատանքը:

Ներզատող գեղձերը կարող են միատեսակ  
կամ համառակ ազդեցություն ունենալ որդանիզ-  
մի վրա:

Պարզված ե, վոր վորոշ հաստկներ կտալ-  
ված են վորոշ ներդատող գեղձերի գործունելու-  
թյան հետ:

Մանկական հաստկում իր հզոր ազդեցու-  
թյամբ տշքի լե ընկնում խպիպը, վոր գոլութիւնն  
ունի միայն տղի հաստկում մինչև արքունքի  
շրջանը, վորի ընթացքում մնշում ե գործում սե-  
ռական զարգացման վրա:

Յեթե յերիտասարդ աքաղաղի խպիպը հե-  
ռացվի, առաջ կդա վաղաժամ սեռական հասու-  
նացում:

Վորպեսզի անհատը նորմալ կերպով զար-  
գանա և հասնի սեռական հասունացնան, պետք  
ե խպիպն աստիճանաբար փոքրանա և արքունքի  
շրջանում միայն անհետանա, իսկ վահանաձեւ և  
սեռական գեղձերն աստիճանաբար զարգանան

Սեռական գեղձերի ատրոֆիան, կամ թա-  
ռամելը առաջ ե բերում ծերություն:

Բացի դրանից, ծերության հատուկ ներազ-  
դող դեղձ ե համարվում և վերևերիկամոլին զեղ-  
ձը, վորի ազատ հորմոնը առաջ բերում արաե-  
րիս սկլերոզ և որգանների այլասեռում:

Այսպիսով, պարզվեց հորմանների քիմիական  
ազդեցությունն որգանիզմի վրա և սեռի ու  
հաստկի կախումն այս կամ այն հորմոնից:

Պարզվեց սեռական գեղձերի հորմոնի դերը  
որդանիզմի հասունացման գործում:

Հիմնվելով սրա վրա, Բրոուն Սևկարը կա-  
տարեց իր լերիտասարդացման տուջին փորձը:  
Նա լերիտասարդ կենդանիների սեռական գեղ-  
ձերի հորմոնը հանելով, սրսկեց իրեն և ալղպի-  
սով ժամանակավորապես բարձրացրեց իր գոր-  
ծարանների գործունակությունը:

Վեննայի գիտնական Շտախտիչը տվել հեռու-  
ղնաց իր սպիտակ մկների վրա կտարած.  
Լերիտասարդացման փորձերով:

Նու արու մկներին ամորձատելով, նրանց  
սեռական գեղձերը փոխարինում ե իգական  
ձվարաններով, զարձնու, նրան իգական արտա-  
քինով և իգական սեռական բնագդով մուկի կամ  
թե չե արտական սեռական գեղձերին ավելացնե-  
լով իգական ձվարաններ, ստանում ե հերմոֆրո-  
դիտ մկներ:

Վերջապես, Շտախտին իրականացրեց ար-  
հեստական կերպով լերիտասարդացման դաշտ-  
փարը: Նա զառամլալ մկների (մաֆուսաիլի)  
թառամած սեռական գեղձերը փոխարինելով  
լերիտասարդ կենդանիների սեռական գեղձերով,  
լերիտասարդացնում եր նրանց, վերադարձնելով  
նրանց վոչ միայն սեռական բնագդը և սերունդ  
արտադրելու ընդունակությունը, ալլ և Փիզի-

կապես և հոգեկան տեսակետից եր թարմացնում  
և ուժեղացնում նրանց:

Նման փորձերը մարդկանց վրա անկարելի  
յեր կատարել, վրովիետև գիտնականները չղիտե-  
լին — վրտեղից վերցնել լերիդասարդ մատերիալ  
ծերունիների համար: Սակայն ներկայումս մար-  
դիկ այդ նպատակով զբաղվում են մարդանման  
կապիկներ քազմացնելով:

Մարդկանց վրա լերիտասարդացումը կա-  
տարվում ե վորոշ կերպ՝ կտրում են սերմատար  
ծորանները և արդպիսով արգելում սերմարջիշ-  
ների արտադրումը:

Գեղձերի սերմ աղտադրող հլուսվածքը լին-  
թարկում ե ատրոֆիա՝ նրա հաշվին զարդա-  
նում և ուժեղանում ե միջնահլուսվածքը՝ հորմոն  
արտադրող հլուսվածքը և ուժեղացնելով իր ազ-  
դեցությունը, բարձրացնում ե որդանիզմի ու-  
ժերը, լերիտասարդացնում որդանիզմը:

ՍԵՐԱԿԱՆ ՀԱՍՈՒԻԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԸ ՅԵՎ ՊԱՏԱՆԵ-  
ԿԱԿԱՆ ՀԱՍԱԿԻ ՀՈԴԵԱԾՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

Թեև սեռական հատկանիշերն առնատի մեջ  
առաջ են գալիս արբունքի շրջանից շատ առաջ,  
գեռ արգանդալին կլանքում, բայց կտրուկ կեր-  
պով սեռերն իրարից տարերելու շրջանը հա-  
մարվում ե աղբունքի արջանը, լերը սեռի ձևա-

կերպումը կատարվում ե փոթորկալից արտգ և  
սրբնթաց թափով:

Արբունքի շրջանում պատանին զարդանում  
ե վոչ միայն Փիզիկապես, ալլ և ուղեղի ալդ  
շրջանի ուժեղ զարդացման հետ զարդանում են  
նրա մտավոր ընդունակությունները, զարդանում  
են մտապատկերները; առաջ են դալիս վերա-  
ցական մտքեր, կազմակերպելու ընդունակու-  
թյունն, զարդանում ե խնդնուրուն դտառղու-  
թյունը, կամքը գործում ե գիտակցաբար:

Հոգեկան և մտավոր զարդացումը պատա-  
նիների մեջ հաճախ զուղընթաց չե Փիզիկական  
զարդացման հետ նա կարող ե զանդաղել, հետ  
մետ, կամ կանխել Փիզիկականին:

Այսպիսի անզուղընթաց զարդացման նպաս-  
տում ե հիվանդութանությունը և  
ստեղծում անորմալ տիպեր:

Սակայն ժամանակի ընթացքում այս տար-  
բերությունը մեծ մասամբ հավասարակշռվում ե:  
Սրանով ե բացատրվում այսպես կոչված հրաշք  
լերեխաների կամ արտակարգ հանճարեղ լերե-  
խաների գոլությունը (Վիկտոր Համբարձումլան-  
մաթեմատիկոս): Սակայն սրանից յատ շատ ըն  
արբունքի շրջանից հետո վոչնչով չեն տարբեր-  
վում ալեւ ուրիշ սովորական լերեխաներից:

Եաւ աշակերտներ մինչև արբունքի շրջանն

աչքի լեն ընկնում իրենց արտակարգ ընդունակությամբ, սակայն արքունքի շրջանից հետո դառնում են սովորական լերեխտ, հաճախ նույնիսկ ավելի թույլ:

Պատահում ե և հակառակը՝ մանկական հասակում թույլ լեղան լերեխաները հաճախ արքունքի շրջանից հետո ուժեղանում են.

Վորովինետե մանկական հասակից պատանեկական հասակի փոխանցումը կատարվում է չափազանց արտգ, պատանին հաճախ միացնում է իր մեջ չնշնչված մանկական հատկությունները. Պատանիներն իրենց մեծ են զգում, բայց ձեւերը լերեխալական են: Նրանց մանկական մտապատկերները խառնվում են կիսահասուն և քննադատությունից զուրկ մտապատկերների հետ: Վորովինետե շրջապատից շարունակ լսում են, վոր իրենք մեծացել են, պատանիները չափազանց մեծամտում են, մանավանդ տղաները, վորոնք մեծամտությունից իրենց ուժերից ավելի մեծ ձեռնարկությունների լեն դիմում: Պատանիներն ամեն ինչ կարդում, ամեն ինչի մասին խոսում են և յերեակալում, վոր իրենք ամեն ինչ ովելի լավ են հասկանում, քան մեծերը:

Այս ե պատճառը, վոր նրանք ամեն քանի մասին իսկույն սկսում են վիճել: Այս ե պատ-

ճառը, վոր նրանք այդ հաստկում հաճախ ծնող-ներից լերես են դարձնում:

Ստկայն այդ հաստակում պատահիներն ընդորինակում են մեծերին: Շատերն իրենց հասունությունն ապացուցելու համար, ավելի շրջում՝ մեծերին նմանվելու համար, սկսում են ծխել, խմել, մեծերի ձեռվ խօսել, շարժվել և ալին:

Սեռական հասունացման շրջանում մեծ թափով են զարդանում ու դունավորվում զգացմունքները: Պատահիները հեշտությամբ վոգեորվում են, հեշտությամբ զրդովում, վորովինետենրանց ուղեղը վերջնականապես չի զարգացել և նրա զսպանակները չեն ամրացել: Պատահին հեշտությամբ բռնկվում ե այս կամ այն զգացմունքով, այսինքն՝ շուտ վիրավորվում, բարկանում, հրապուրվում և ալին:

Վերոհիշյալ հատկությունների հետ միաժամանակ հիմք են զցում և զարդանում են պատանու մեջ հոգեկան ավելի բարձր հատկությունները:

Պատահու մեջ արթնանում ե մտքի քննադատական ուժը, իր և դիմացինի վարմունքներն իրենց հետ համեմատելու ուժը: Պատահին սկսում ե լուրահատուկ կերպով պարզաբանել իրեն համաշխարհալին խնդիրները: Արթնանում ե սոցիալական զգացմունքը, սոցիալական խլն-

գիրներով հետաքրքրվելը և ստեղծագործական ընդունակությունը։ Մեծանում ե նրա ակտիվությունը։

Աղջիկների սեռական հասունացումը մի փոքր տարբերվում է տղաներից։ Տղաների հսկայական ակտիվության հետ համեմատած, աղջիկները մի փոքր պասսիվ են Սրտ պղատճառը հետելովն եւ սեռական լերկրորդական նշանները լերնան գալուց հետո աղջիկը խորասուղվում է ինքն իր մեջ։ Կարծես ընկնում և մի նոր ներքին աշխարհ, զառնում և չափազանց զսպված, կարելի յեւ տսել մի փոքր վախիկոտ։

Տղաներն աշխատում են զրսեորեւ իրենց ակտիվությունը, իսկ աղջիկներն, ավելի խորասուղվելով իրենց մեջ, ընքնադիտողությա՞ր են տարվում (սեր զեպի որագիրը)։ Զափազանց ընորոշ ե տղաների և աղջիկների համար հետելու լերեառլթը։ մանկական հասակում չատ մտերիմ լեղած աղջիկն ու տղան արբունքի չըջանում խզում են այդ մտերմությունը։ Աղջիկների այդ շըջանի գսպվածության առիթ ե տալիս մեծամտացած տղաներին՝ բարձրից նայելնրանց վրա։ Սակայն հետադարյում հովասարաւակովում են նրանց փոխհարաբերությունները։

## ՍԵՐԱԿԱՆ ԲՆԱԳԴԻ ԶԱՐԴԱՅՈՒՄԸ

Սեռական հասունացման շրջանը վորոշվում է զգացմունքների և բնազդների արթնանալով:

Ամենից առաջ յերևան և գտիս ընկերանալու, բարեկամանալու զգացմունքը, հարգանքի զգացմունքը, լերկրպագության աստիճանի հասնող համակրանքի զգացմունքը, վորը տարածվում է զեղի ուսուցիչը, ազգականը, մոտիկները և այլն:

Այսուհետեւ արթնանում է սեռական բնազդը, վորն աննորբալ պայմաններում վտանգավոր թեքում և ստանում դեղի ոնանիզմը, դեղի վտագաժամ սեռական կյանքը: Վերջինիս նպաստում են այն հիվանդու ոլարմանները, վորոնց մեջ մեծանում և մատադ սերունդը:

Գյուղական ծանը ֆիզիկական աշխատանքը և զբկանքներն ուշացնում են սեռական բնազդի արթնացումը: Թաղաքի կյանքը նպասպում է նրա վաղաժամ արթնանալուն: Իսկ կտաղիտոլիստական կարգերը թե հարուստին և թե աղքատին, տուավելասկես յերիտառարդությունը, զոհ են դարձնում վաղաժամ սեռական կյանքի, վորը տանում և դեղի ֆիզիկական և մատավոր այս սեռում, հետաղիմություն, հանցագործություն և վեներական ախտեր:

Սեռական ախտերի առաջացման նպաստում

են նաև առատ սնունդը, տաք սենյակը, փափուկ անկողինը, խմիչքը, մանավանդ ալկոհոլը, մտավոր հոգնածությունը, ֆիզկուլտուրայի բացալությունը և վորոշ հիվանդությունները, ինչպիսիք են՝ տղիքալին վորդերը, պարագիտները:

Սպարտացիք իրենց լերիտասարդների դաստիարակության ժամանակ այս բոլոր ծանր հանգամանքներից ազատ ելին պահում նրանց:

Ներկայումս բանվօր և գլուղացի ազգաբնակչության մեջ ընտակարանային ծանր պարմանները, ընդհանուր անկողինը, ընդհանուր սենյակը, մեծերի սանձարձակ խոսակցությունը փոքրերի ներկալությամբ, վարքը և ընդհանրապես սեռական բնույթ կրող գրականությունը, կինոն, պարերը ստիպում են պատանիներին իրենց ակտիվությունը գործադրել վաղաժամ սեռական կյանքի ուղղությամբ:

Վաղաժամ առաջ լեկած սեռական հետաքրքրությունը և վաղաժամ սիրահարությունը պարզ ե, վոր նրանց կտանեն գեղի վաղաժամ սեռական կյանք:

## ՍԵՐԱԿԱՆ ՀԱՍՈՒԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՐԳԱՆԻՉԱՑՄԱՆ ՎՐԱ

Ինչպես տեսանք, պատանիների և սեռակում անհատը լենթարկվում է խոշոր ֆեղիկական և

հոգեկան փոփոխությունների, ինչպիսիք են ռուաշնակարգ և լերկորդական սեռական հատկանիշերի առաջացումը:

Պատանու մտապատկերների և բնազդների մեջ տուած են գալիս տարրութերութերներ, վաղաժամ արթնացած սեռական բնազդ՝ ոնանիզմը և հաճախ վաղաժամ սեռական կլանքը, վորի հետեանքը լինում ե հաճախ և վեներական հիվանդություններն անհետեանք չեն անցնում պատանու համար։ Մատաղ որդանիզմի մեջ այս ապրութերն առաջ են բերում մտքի ցրվածություն, ուշադրության խանգարում, թուլացում։ Իսկ սրանք մտավոր ընդունակությունների խանգարման նշաններ են։

Յեթե սրան ավելացնենք և պատանու տրամադրության անկայությունը, նլութից նլութթուչելը, շուտ հոգնելը՝ այս բոլորը նլարդային և հոգեկան խանգարութեր (ներաստենիա) կարելի յե անվանել։ Վերջինս ավելի լե ծանրանույ, յեթե պատանին ծանրաբեռնված ե հիվանդուժառանգականությամբ՝ ալկոհոլիզմով, սիֆիլիսով և այլն։

Պետք ե նկատել, վոր ներաստենիան և հոգեկան հիվանդությունները մեծ մասամբ լերեվան են գտնիս պատանեկան հասակում, վերահիշալ ծանր փոփոխությունների և ապրում-

ների հետեանքով, վոր ունենում ե պատանին:

Սեռական հողի վրա կատարած հանցագործությունների և ինքնասպանությունների մեջ տոկոսը հետեանք ե նլարդային և հոգեկան խանգարութերի, կատարվում ե սեռական հասունացման շրջանում՝ 14-24 տարեկան հաստկում:

Սրա պատճառն այն է, վոր պատանու կամ լերիտասարդի ուղեղի զսպիչ կենտրոնները դեռ վերջնականապես ձկաղմակերպված չեն, ուստի անհատը հեշտությամբ ե կորցնում իր հոգեկան հավատքարտկությունը:

Այսպիսով պարզեց, վոր մարդու կյանքի ամենաեկրիտիկական շրջանը սեռական հասունացման շրջանն է, վոր վորոշում ե մարդու հետագա բախտը: Անհատի ամենատգժվար պարագաների դեմ տեղի լե ունենում պատանեկան (14-24 տ.) հաստկում, և լեթե ալդ շրջանում նու հաղթող դուրս լեկավ, նրա ապագան տպահոված ե:

## Ի՞նչ ե Սեռական ԲՆԱԶԴԴԸ ԿԱՄ ԱԵՐԱԿԱՆ ԵՆԵՐԳԻԱՆ

Ի՞նչ ե բնագդը: Այդ՝ ցանկություն ե կամ կարողություն մի գործ կատարելու՝ կերակուրութելու և ալլն: Գործողության կարողությունն ուրիշ խոսքով կոչվում ե եներգիա, վոր հունարեն

կնշնակիր գործունակություն։ Գործունակ մարդուն անվանում են եներգիայով լի մարդ։

Բնության մեջ եներգիան տարբեր ձևով ելինում։ Մենք զիտենք ելեկտրական, լուսի, տաքության, շարժողության և այլ ձևի եներգիաներ։

Եներգիան ունի լերկու գրություն՝ պոտենցիալ և կինետիկ։

Բնության մեջ մի տեսակ եներգիան կարող է ձևափոխվել մի ուրիշ տեսակի, ինչպես ջրի շարժողության եներգիան ձևափոխվում է ելեկտրականի (Հիդրոէներգիա, Ջագեսը և այլն), գոլորշու եներգիան՝ շարժողության եներգիալի (շոգեկառքը) և այլն։

Մարդը մի մեքենա լե, վոր իր կենսական սրոցեների համար արտադրում, գործադրում և իր սեփական եներգիան՝ տաքության եներգիան, վորն ըստ հարկավորության ձևափոխվում է ելեկտրական, շարժողական, սեռական և այլ եներգիաների։

Սեռական բնագդը սեռական եներգիա լե, իսկ վարովինետն ամեն մի եներգիա գործ կատարելու ուժ ե, հետևաբար սեռական եներգիան ուժ ե, այն ուժը, վոր ստեղծում ե այս կամ այն սեռը, առաջ ե բերում և զարգացնում մարդու մեջ սուաջնակարգ և լերկորդական սեռական հատկանիշներ։

Իսկ ալդ ստեղծագործական ուժը առաջ ե-  
գալիս շնորհիվ սեռական գեղձերի գործունելու-  
թյան, վորն արտահայտվում ե սեռական բջիջ-  
ների և հորմոնների արտադրությամբ:

Ամորձատվածների վրա փորձերը ցույց են  
տվել, վոր առանց սեռական հորմոնի մանուկը  
վորոշ սեռական թեքում չի ստանում, իսկ հա-  
սուն մարդը, զրկվելով սեռական գեղձերից, սեռ-  
մարդիջներից և սեռական հորմոնից, կորցնում  
ե իր թե Փիզիկական և թե մտավոր հոգեկան  
ընդունակությունները և զրկվում սերռունդ, ար-  
տադրելու ընդունակությունից:

Սեռական բնագդը կամ եներգիան պատա-  
նեկական հասակում առաջ ե բերում սեռական  
կյանքով ապրելու ցանկություն և Փիզիկապես,  
մտավորապես զարգանալու, ինքնուրույնանալու  
ընդունակությունն:

Հասուն հասակում սեռական եներգիան ան-  
հատին տալիս ե մտավոր Փիզիկական և սեռա-  
կան կյանքով ապրելու հնարավորությունն:

Վորքան մարդ ուժեղ ե Փիզիկապես և զար-  
գացած մտավորապես, այնքան նրա սեռական  
եներգիան շատ ե ուժեղ: Հետևաբար այնքան  
նա ընդունակ ե թե սեռական կյանքի և թե  
Փիզիկական և մտավոր աշխատանքի:

Պատմության բոլոր հերոսներն ուժեղ մար-

Դիկ լինելով, ուժեղ են յեղել նաև սեռական եներգիալով, վօրն արտահայտվում ե նրանց մատվոր և հասարակական հսկալական աշխատանքով և միաժամանակ սեռական կյանքով:

Այսպես են յեղել Պետքոս Մեծը, Պուշկինը, Տալստոլը, Հայնեն, Լեոնարդո Դա Վինչին և այլն:

Այսպիսով, սեռական եներգիան մարդու ամենագլխավոր ուժն ե, նրա կյանքի կտավի տալը, հետևաբար՝ վորքան այն կտավի տալը մեծ լինի, այնքան անհատն ավելի ուժեղ կլինի կյանքում:

Ստկան բավական չե կյանքի կտավի տալ ունենալը, պետք ե գիտենալ նրա ինտլողաբար և նպատակահարմար գործադրելը:

Այս խնդրում շտտերը պատանեկական հասակում ինչպես և հետազայտում իրենց վաղաժամ սեռական կյանքով և հիվանդագին թեքումներով՝ ոնանիզմ և այլն, վատնում են իրենց ունեցածը և շուտով մնում աղքատ, կյանքի համար անպետքացած, վորովհետև նմանները չգիտեն, վոր սեռական եներգիայի վաղաժամ վատնումը կտարավում ե իհաշիվ իրենց ֆիզիկական, ստավոր և հոգեկան զարգացման:

Բնության մեջ ամեն ձեի եներգիա արտադրվելուն պես պետք ե գործադրվի, վորովհետև նրա ամբարումն անհնարին ե: Որինակ՝ շագեմե-

քենալի գոլորշին իսկուն պիտի գործադրվի, թե  
չե և քենան կալալիթի

Սեռական հներդիտի ամբողումը նույնպես  
անկարելի է. նա ստիպում է իսկուն գործա-  
դրել:

Ի՞նչի ՎՐԱ ՊԻՏԻ ԴՈՌՄԱԴՐՎԻ ՍԵՌԱԿԱՆ ԵՆԵՐԳԻԱՆ  
ՍԵՌԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԾՐՁԱՆՈՒՄ

Պետք է արդյոք անհատն իր հասունացման  
շրջանում սեռական հներդիտան գործադրի սեռա-  
կան կյանքի վրա:

Կենդանաբուժներն ապացուցում են, վոր  
կենդանու և այլ ջնտանի կենդանիների վաղա-  
ժամ սեռական մերձեցումն այլանեռում, մանրաց-  
նում է նրանց: Այս և յեղել պատճառը, վոր  
Նորվեգիալի խոշոր կովերը մանրացել են:

Նույնը կտաւըրվում է մարդու հետ: Վա-  
ղաժամ սեռական կյանքը և սեռական ախտերը  
սպառել են տալիս պատճանու այն ուժը, վոր  
հասունացման շրջանում պիտք է գործադրվի  
նրա որգանիզմի ֆիզիկական, մտավոր և հոգե-  
կան աճման վրա: Աւստի նա ալդ յերեք ուղ-  
ղությամբ ել հետադիմում է, մանրանում:

Վարոհիշլալը հաստատվում է բժշկական և  
մանկավարժական դիտողություններով: Ժան Ժակ  
Բուստոն իր «Եմիլ»-ում ասում է՝ «Այն յերի-  
դասարդները, վորոնք անձնատուր են լինում վա-

դաժան սեռական կլանքի, աշքի լեն ընկնում  
անմարդասիրությամբ և կորցնում են ամոթի  
զգացմունքը»:

Առևս հոգեբան պրոֆեսոր Սիկորսկին գրում  
է՝ «Բաստիաբակության ամենակարեղոր խնդիրնե-  
րից մեկը ամոթի՝ զգացմունքի զարդացումն ե  
մարդու մեջ։ Նա բարձրացնում ե սիրու զգաց-  
մունքը, իդելականացնում ե, մարդու բնավորու-  
թյանը տալիս ե ազնվություն, ստիպում ե մար-  
դուն՝ ուշադիր լինել դեպի խղճի պահանջները։  
Ամոթի զգացմունքն այն բարձրագույն, կաքն ե,  
վորն ողնում ե ասրբերել չոր զործը բարուց և  
դիմադրել այն բոլորին, ինչ վիրավորում ե  
մարդու բարոյական զգացմունքը»:

Զլոտորյովն ասում է՝ «Բնական ամոթի  
զգացմունքը պետք ե վոչ միտին պահպանել,  
այլ և զարդացնել մարդու մեջ»։

Այսպիսով, իրոք ամոթի զգացմունքն այն  
հզոր լծակն ե, վորը բարձրացնում ե մարդու  
հոգին և բարոյականությունը։

237 գերմանացի և ռուս գիտնականներ ի-  
րենց ուղղված հարցազնդումին, թե վսասակար  
ե արդյոք ժումակալությունը լեզիտաստրդության  
համար սեռական հասունացման շրջանում, բո-  
լորը միաբերան պատասխանել են, վոր վոչ  
միտին վսասակար, այլ և ընդհակառակը՝ չտփա-

զանց ոգտակար եւ և անհրաժեշտ, վոր ժուժ-  
կալությունն ոգտակար ե նույնիսկ հասուն շըր-  
ջանում:

Ցեթե եներգիան անբարել չի կարելի, ապա-  
հւր ե գնում այն անհատների եներգիան, վո-  
րոնք ամբողջ կյանքում ժուժկալ են մնում:

Պատմության վերածնության շրջանի ամե-  
նամեծ մարդն այս տեսակետից իտալական հան-  
ճարեղ քանդակգործ, ճարտարապետ և բժիշկ  
Լեռնարդո ԴաՎիչին եր: Պատմական փաստերով  
հաստատվում ե, վոր նա իր ամբողջ կյանքում  
պահպանել ե իր կուսությունը:

Սեռական եներգիան, նման մլուս ձեւերի  
եներգիաների, ընդունակ ե ձեսփոխվելու աշ-  
խատանքի բոլոր տեսակ եներգիաների: Այսպիսի  
ձեսփոխությունը կոչվում ե սուբլիմացիա:

Ուր ե գնացել Լեռնարդո ԴաՎիչի սե-  
ռական եներգիան, լեթե նա սեռական կյանքով  
չի ապրել:

Անկատաձ՝ սուբլիմացիայի ե լենթարկվել,  
այսինքն՝ աշխատանքի եներգիալի լե վերածվել  
ե գործադրվել նրա հանճարեղ ստեղծագործու-  
թյունների վրա:

Բայց չե վոր սեռական եներգիան հսկայական  
ուժ ե և նրան դիմադրելն անկարելի լե, ձես-  
փոխվելը չափազանց դժվար ե գուցե:

Մարդու համար, վորը զինված եւ գիտակցությամբ, նզոր կամքով և գիտական պատրաստականությամբ՝ անկարելի վոչինչ չկա:

Մարդը չե՞ վոր իր հզոր կտմքով և գիտության ոգնությամբ հպատակեցրել եւ իրեն բնության հսկայական ուժերը՝ ողը—տվիտցիան, ջուրը—սավավարությունը, ելեքտրոմատորները, քամին, վորի ուժը գործադրվում եւ զանազան մեքենաներ պատեցնելու վրա և ալին:

Հետեաբար, մարդը կարող եւ հպատակեցնել իրեն նտև իր բոլոր բնազդները, վորոնց թվին և պատկանում և սեռական բնազդը:

Այս բոլորը դաստիարակության խնդիրներ են, այդ պատճառով մատադ սերնդի սեռական դաստիարակության խնդիրները չափազանց կարեվոր խնդիրներից մեկն են:

Սեռական դաստիարակության նպատակը պիտի լինի լերիտասարդության կլանքն այնպես կազմակերպել, վոր սեռական հետաքրքրություն առաջ բերող հանգամանքները դուրս գան նրա կլանքից մինչև 22—24 տ. հասակը:

Այս նպատակին կհասնենք, լեթե լերիտասարդության կլանքը լցված լինի այլ բովանդակությամբ, լեթե նրա՝ աղբյուրի նման դուրս բերող ակտիվությանը սոցալական ուղղություն:

առանք, մասնավունդ, վոր տրդ հաստին առանց  
ան ել լի լի սոցիալական ձգտություն:

Պատանեկական հաստիկում, լեբը սեռական  
եներգիան սոցիալական և ընդհանուր բխողոգիա-  
կան ուղղություն չի ստանում, պատանեկական  
տկտիվությունը շուրջ և գալիս դեսպի ներս և  
առաջ բերում սեռական պահանջ, վորն արտա-  
հայտնում ե հետեւաց ձեռքով՝ ոնանիզմի, սեռա-  
կան հետաքրքրության, վաղաժամ սիրահարու-  
թյան (սեռ մերձեցման) և ալլն:

Այս նպատակին համնելու համար չափա-  
դանց նպատակահարմար են մեր պիոներական,  
կոմիերիտական կազմակերպությունները:

Այս կազմակերպությունների ներքին խելա-  
ցի դիսցիպլինան պիտի դաստիարակի պատա-  
նիների հեղինեղուկ կամքը: Այստեղ Փիզիկուլտու-  
րայի, ուսման և գիտության միջոցով պիտի դաս-  
տիարակվի տուղջ հոգի տուղջ մարմի մեջ:

Զարգացնելով մատաղ սերնդի միտքը, կամքը,  
ամրացնելով նրան Փիզիկապես, մանկությունից  
մտցնելով նրա մեջ սոցիալական դաշտավարները՝  
համարավորություն կտրվի նրանց ակտիվությունը  
նպատակածնարմար գործադրել և հետ կկանեցվի  
սեռական խեղաթյուրությունից՝ ոնանիզմից, վա-  
ղաժամ սիրահարությունից և ալլն:

Իսկ կոմիերիտական շարժմանը, վոր պիո-

ներների հետազա և ավելի հասուն շըջանն ե,  
ավելի մեծ դեր ե վերտապահվում կյանքում:

Նրանցից պահանջվում ե արդեն ավելի մի-  
ջամտություն յերկրի գաղաքական կյանքին,  
պահանջվում ե վոչ միայն նվիրվել գաղափար-  
ներին, այլ և ակտիվ կռվել նրանց պաշտպանու-  
թյան համար:

Այսպիսի գաղափարական կռվը կյանք մ ե  
պատահու և դեռասի յերխասարդի սեռական  
եներգիայի խոշորագույն մասը, և սեռական տպ-  
րու մներին բաժին մնացած փոքր եներգիայի դեմ  
մաքառելը դժվարություն չի հարուցում այսն  
պատահուն կամ յերխասարդին:

Ամփոփելով խոռօս և ուշադրություն տո-  
ներով տին վստահությունը, վորով աշակերտու-  
թյունն իմ վերահիշյալ սեռական լուսավորական  
աշխատանքից հետո սկսել ե դիմել ինձ, վորպես  
խորհրդատուի, պետք ե ընդունել, վոր սեռական  
լուսավորության և դաստիարակության խնդիրը  
ներկայումս իրոք հետեւյալ հրատապ պահանջ-  
ներն ե տուժադրում դպրոցին և ընտանիքին.

1. Վորովինեա յերեխալի սեռական կյանքին  
վերաբերող հանգամանքները յերեխալից թագ-  
ցնել անկարելի յե, անթուլատրելի և կորը-  
տաբեր, ուստի անհրաժեշտ ե տալ նրան ժա-

Նանակին հարկավոր սեռական դաստիարակություն և սեռական լուսավորություն:

2. Սեռական դաստիարակության և սեռական լուսավորության խնդիրը լուծելու համար մանկավարժը պետք է ունենա լավ պատրաստականություն՝ թե տեսական և թե գործնական կողմից, պետք է ունենա մանկավարժական նուրբ տակտ և մաքնլը մտածելակերպ:

3. Վորովինետև չկա անջատ սեռական ապարատ և ֆունկցիա, չպիտի գոլություն ունենա և անջատ սեռական կրանք, անջատ սեռական դաստիարակություն առանց սոցալական և բիոլոգիական բազույթի:

4. Վորովինետև սեռական բնագդը բնածին և յերեխալի մեջ, ռւստի վաղաժամ արթնացած սեռական վարքը հետևանք ել վոչ թե որդանիզմի այս կամ այն հիվանդության, այլ հիվանդության բնագալի և սխալ դաստիարակության:

5. Խելացի դաստիարակությամբ մենք պետք են հետապնդենք յերկու մոմենտ՝

ա) պահպանենք սեռական բնագդը, վորպես կրանքի աղբյուր:

բ) սեռական բնագդը հպատակեցնենք կուլտուրալի, ինքնաղիսցիպլինալի, ինքնառանալիզի, վոր ժուժկալությունը լինի վոչ — ոչ շահական, այլ ինքնարբուդիս՝ չնորինիվ պատանիների սոցիալա-

կան և բիոլոգիական կտտարյալ հասունության:

6. Սեռական դաստիարակության և լուսավորության խնդրում նույնպես պահպանել դըպրոցական հասակի լեռեք շրջանները՝ նախադպրոցական, | աստ. և || աստ. դպրոցական հասակները և ամեն մեկ շրջանին ցույց տալ հատուկ մոտեցում:

7. Նախադպրոցական հասակում ամենակարենը համարել սեռական դաստիարակությունը՝ զարկ տալով հիգիենիկ պարմաններին, լրացնելով մանկական ժամանակը խաղերով և նրան հետաքրքրությունը սահմանափակել կարճ ու կտրուկ պատասխաններով մանկան տված հարցերին, խուսափելով տերմիններից և մանրամասնությունից, բայց վոչ լեռեք մանկական հարցերից:

8. | աստ. դպրոցտկանի սեռական դաստիարակությունը նախ և առաջ ընտանիքի վրա աղղեն և և ընտանիքի լուսավորությունը, լերկ-բորդ՝ սուբլիմացիան՝ աշխատանքի, ֆիզկուլտուրայի, խաղի, սպորտի և ալլ ձեռվ, լերըրդ՝ հիգիենիկ օւնակությունը և խստիվ հակողությունը նրանց վարքի վրա թե տանը, թե դպրոցում և թե դպրոցից դուրս:

9. | աստ. դպրոցների սեռական լուսավորությունը մեկ կողմից եպիզոդիկ բնութիւնում,

պիտի շոշափի աշակերտի վարքի ամեն մի շեղումն ուսուցչի նախաձեռնությամբ, մըուս կողմից՝ պլանալին կերպով կտպվի ծրագրի հետ, ընդպրկելով հետևյալ լերեք կարնոր խնդիրները՝ մահվան անհրաժեշտությունը, կանքի պահպանումը, ուժեղացումը և կանքի շարունակումը՝ բազմացման խնդիրը բույսերի, թռչունների և կոթնասունների մեջ, վորոնց կոնկրետ ձեերը նրանք դիտում են կրանքում և եքսկուրսիալիքամանակ:

10. Ա աստ. դպրոցականի սեռական դաստիարակության խնդիրը լուծելու համար պետք է լերեան հանել լերկու սեռի աշակերտության ապրումների պատալոգիան և հետ քաշել դպրոցականներին երոտիզմը զրգուղ հանգամանքներից գեպի Փիզկուլտուրա, հասարակական ակտիվ աշխատանք, այսինքն՝ սուբլիմացիալի լենթարկել նրանց սեռական եներգիան ըստ Սորոխտինի սխեմալիք:

11. Ա աստ. դպրոցականի սեռական լուսավորության խնդիրը բաժանել լերկու մասից բժշկական և մանկավարժական.

ա) բժշկական մասը վերապահել դպրոցական բժշկին, վորը վոչպատահական ձեռվ, այլ առողջապահության հատուկ ժամերին նրանց նախ և առաջ պիտի ծանոթացնի իրենց մարմնի լրիվ

կազմության հետ, կցելով ընդհանուր անտառմիացին, Փիզիոլոգիային և բիոլոգիալին սեռական որդանների անտառմիան, Փիզիոլոգիան և գիգիենան և, յերկրորդ՝ պիտի ծանոթացնի սեռական կյանքի պատալոգիալի՝ վեներական ախտերի, արկոհոլիզմի և ծխելու վնասակար հետեանքների հետ սեռական կյանքում:

բ. մանկավարժական մասը հասարակագիտական և բարոլական հիմունքներով մոտեցումնեւ: 11. աստ. դպրոցականի սացիալական հասունության կարևորությունը լուսաբանելու խնդիրը պետք եւ վերապահել մանկավարժին, (դաստիարակին), վորը զրուցով, ընթերցանությամբ և մաքերի փոխանտեկությամբ աշխատում եւ բարութական սերմեր գցել աշակերտի մեջ.

12. 11. աստ. դպրոցականի սեռական սանձարկության գեմ պալքարելու գործը վերապահել աշակերտական կազմակերպությաններին, կոմիերիտմիությանը, վորն աշակերտության իդեալական ձգտումները պիտի կապի հասարակության ռեալ ուղղությունների հետ և իմպուլսա հասարական ակտիվ աշխատանքի, վորով կկանչի նրանց սեռական եներգիայի խոշորագույն մասը:

13. Սեռական դաստիարակության և լուսավորության խնդիրներում ծնողներին և ման-

Կավարժներին աջակցելու համար պետք է ու-  
նենալ սժանդակ հիմնարկություն՝ պետական-  
քաղաքան կոնսուլտացիա:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Проф. Залкинд А.—„Язвы в системе поло-  
вого воспитания“ журн „Ре-  
волюция и культура“
2. Файнгольд—„Половое созревание“
3. Проф. Залкинд А.—„Половой вопрос с ком-  
мунистической точки зрения“.
4. Проф. Рубинштейн М. М. { „Психология, пе-  
дагогика и ги-
5. Проф. Игнатов Ц. Е. } гиена юности“.
6. Кинокартина „Омолаживание“
7. А. Я. Сосюр—„Половое воспитание детей“.
8. Др. Фрюдинг „Половое просвещение в  
деле воспитания“.
9. Др. М. А. Арони—„Дети и половой вопрос“.
10. Др. Холецкий—„Половая жизнь и невра-  
стения“.
11. Др. Цуккер—„Физкультура быта и половой  
вопрос“.
12. Др. Коган—„Половая жизнь и алкоголь“.
13. Др. А. Успенский—„Половая жизнь и ее  
отклонение“.
14. Др. М. Годан—„Пол и любовь“.
15. Др. М. Годан—Беседа с молодежью“.

16. Др. Е. Аркин— „Дошкольный возраст“—глава:  
„Половая жизнь в раннем детстве“.
17. Половцева— „Половой вопрос в жизни ребенка“.
18. Др. Лозинский— „Проблема сексуальной педагогики“.
19. Жаринцева,— „Объяснение полового вопроса детям“.
20. Жаринцева— „Как все на свете рождается“.
21. Др. Юнг— „Конфликт детской души“.
22. Симонов— „Школа и половой вопрос“.



Սրբագրեց՝ Հ. ԱԱՌԻԿՅԱՆ

Պետհրատի տպարան

Դատվել է 3977 Դւշվել է 8019 (բ.) ՀԲ

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0040298

[1643]  
1643  
A I  
4605